

Շ.Մ. ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՎԱՅՐԻ ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐԻ
ՍԵՐՄԻ ՆԱՎԱՔՈՒՄԸ
ԵՎ
ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ



ՆԱՅԴԵՏՆՐԱՏ

631.5311

15558

U-43

Աղյուսակ 6.5.

Աղյուսակի սկզբի
համարները կը օգտագործու-

նա:

2-ն 104

633.2:631.531.1//


Ա-43

Պրոֆ. Շ. Մ. ԱՂԱՔԱՐՅԱՆ

ԱՏՈՒԳՎԱԾ Է 1961

**ՎԱՅՐԻ ԽՈՏԷՐՈՒՑՄԱՆԻ
ՍԵՐՄԻ ՀԵՎԼՔՈՒՄԸ
ԵՎ
ՕԴՏԱԴՈՐՆՈՒՄԸ**

A 17933



Проф. Ш. М. АГАБАБЯН
Сбор семян дикорастущих трав
и их использование
(На армянском языке)
Ереван, Армгиз, 1949 г.

ԵՐԿՈՒ ԽՈՍԺ

Արտաւամբարդային խոտաբույսերի սերմնարուծութեանը Ռեպուբլիկայում դեռ նոր է սկսվում: Թե զիտական հիմնարկների և թե կոլխոզների փորձը դեռ չնչին է: Անհրաժեշտ է, որ Ռեպուբլիկայում այդ ուղղությամբ լայն փորձեր կատարվեն և կոլխոզները սերմնարուծութեան ասպարիզում հզած փորձերը նմափոփվեն:

Եթե կոլխոզիկների, կոմերիտականների և դպրոցականների կողմից սերմահավաքի և սերմի օգտագործման վերաբերյալ կառաջանան զանազան հարցեր, հեղինակը գոհունակութեամբ այդ հարցերը կպարզաբանի:

Հեղինակը մեծ երախտագիտութեամբ կընդունի կոլխոզիկների և դպրոցականների կողմից վաչրի խոտաբույսերի սերմի հավաքման և օգտագործման ասպարիզում կատարված փորձերն ու աշխատանքների արդյունքները և բոլոր ջանքերը կգործադրի դրանք պարձնելու կոլխոզների սեփականութուն:

Հեղինակը հույս ունի, որ այս գրքույկը մեր կոլխոզիկներին, կոմերիտականներին և դպրոցականներին կօգնի կազմակերպել խոտաբույսերի սերմահավաքը և սերմի օգտագործումը:

Ելզ աշխատանքը կունենա տնտեսական խոշոր նշանակություն: Սերմահավաքը և սերմի բազմացումը կնպաստի մեր երկրում Դոկուչակ—Կոստիչև—Վիլյամսի կոմպլեքսի արմատավորմանը և զարկ կտա սոցիալիստական տնտեսապահութեան հետագա զարգացմանը:

ՀԵՂԻՆԱԿԸ

տակումը հուշում: Այդ դերը ցանքաշրջանառության մեջ մշակվող բազմամյա խոտաբույսերն են կատարում: Դրանց շարքում են թիթեռնածաղկավորների ընտանիքին պատկանող բույսերը՝ առվույտը, երեքնուկը և կոբնեզանը: Վերջիններն իրենց արմատները շատ խորն են ուղարկում և հողի վերին շերտում կնձկային ստրուկտուրայի ստեղծման գործում մեծ դեր չեն խաղում: Նրանք միայն մեծ քանակությամբ օրգանական նյութեր են կուտակում և հողի ստորին շերտերից բարձրացնում են հողի ստրուկտուրայի ստեղծման համար կարևոր կալցիումը: Հողի ստրուկտուրայի վերականգնման դերը կատարում են գլխավորապես բազմամյա հացազգիները — սիլվախոտը (տիմոֆեեկան), սանրանման չափրը (ժիտնյակը), բարձր բայգրասը, շուշախոտը և մյուսները:

Զիշված հացազգիներն իրենց մանր արմատացանցը տարածում են միայն վարելահողի վերին շերտում և ստեղծում են կնձկային ստրուկտուրա, բայց այդ կնձիկները դեռ կայունություն չունեն: Նրանց կայունություն են տալիս թիթեռնածաղկավորների կողմից կուտակված օրգանական նյութերը և կալցիումը: Ուրեմն, եթե թիթեռնածաղկավորները (երեքնուկ, կոբնեզան, առվույտ) և հացազգիները (ժիտնյակ, տիմոֆեյի խոտ, բայգրաս) ցանվեն միատեսի, խառն ձևով, հողում կստեղծվի կայուն կնձկային ստրուկտուրա:

Ակադեմիկոս Վ. Ռ. Վիլյամսը պահանջում է երկրագործության խոտազաշտային սխեմայի կիրառման ժամանակ ցանքաշրջանառություններում խառն ձևով ցանել թիթեռնածաղկավորների և հացազգիների տեսակները, և ոչ թե առանձին-առանձին — երեքնուկ առանձին, սիլվախոտը առանձին, առվույտը առանձին և այլն:

Երկրագործության խոտազաշտային սխեմայի այս հիմնական դրվածքը — խոտախառնուրդների ցանումը ստացել է մեր երկրում օրենքի ուժ և լայն արմատավորվում է արտագործության մեջ: Այն կոլտոզները և սովխոզները, որոնք ցանում են խոտախառնուրդներ, անասնապետի հարցը միանգամայն լուծել են: Փորձը ցույց է տվել այդ նաև մեզ մոտ — Հայաստանում: Կալինինյի շրջանում մենք ստացել ենք խոտախառնուրդների բարձր բերք: Օրինակ, կարմիր երեքնուկը մաքուր ցանելու դեպքում տալիս է մեկ հեկտարից 35 ց., սիլվախոտը 51 ց., իսկ այդ երկուսի խառնուրդը՝ 58 ց. բարձր որակի խոտ:

Խոտախառնուրդների արմատավորումն ունի պետական նշանա-

կոմիտեներ և մեր կոլխոզները ներկայումս արդեն այդ բանը լավ են բմրանել: Բայց այս դործում կա մի խոչընդոտ, որի վերացման պետքում միայն հնարավոր կլինի երկրագործության խոտադաշտալին սիստեմի արմատավորման խնդիրը լավ լուծել: Դա սերմնաբուծության խնդիրն է: Երկրում անհրաժեշտ է ստեղծել բազմաձև հացադղիների և լոբազգիների խոտաբույսերի սերմնաբուծական բազա: Այդ խնդրի լուծման դործում մեծ դեր կարող են խաղալ մեր մարդագետիների վայրի խոտաբույսերը: Հայաստանի բոլոր շրջաններումն էլ հնարավոր է մեծ քանակությամբ վայրի խոտաբույսերի սերմ հավաքել: Ամեն կոլխոզ կարող է իր ունեցած խոտհարքներից հավաքել մեծ քանակությամբ թե՛ թիթեռնածաղկավորների և թե՛ հացադղիների սերմ և դրանով կուտուրական սերմնաբուծության հետ միասին լուծել նաև սերմի հարցը և խառնուրդներով դաշտերը ցանկելու խնդիրը: Իսկ թե ի՞նչպես և խոտաբույսերի ո՞ր տեսակների սերմը պետք է հավաքել և օգտագործել՝ այդ մասին շարադրվում է հետևյալ գլուխներում:

2. ՎԱՅՐԻ ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐԻ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՏՆՍԱԿՆԵՐԸ ԻՎ ՆՐԱՆՑ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանը վայրի կերատու բույսերով ամենաառատ երկիրն է հանդիսանում: Մեր երկրում փոքր տարածությունների վրա շատ տեսակ մարդագետիներն են տարածված: Այդ մարդագետիներն ունեն հարուստ բուսական կազմ: Պատահում են այնպիսի մարդագետիներ, որոնց խոտածածկոցում բուսում են 10—15 տեսակ թիթեռնածաղկավորների ընտանիքին պատկանող բույսեր: Նույնը կարելի է ասել և հացադղիների ընտանիքին պատկանող բույսերի մասին: Կերատու վայրի բույսերով հարուստ Հայաստանը շատ հեշտությամբ կարող է լուծել սերմնաբուծության խնդիրը և շատ նոր տեսակ խոտաբույսեր մտցնել կոլխոզային արտադրության մեջ: Այդ բույսերի շարքումն են գտնվում հետևյալները.

Թիթեռնածաղկավորներից (լոբազգիներ) վայրի առվույտ, կորնգաններ, միկեր, չին, երեքնուկներ, եղջերառվույտ, ալծուկ, աստրապալներ և ուրիշները:

Հացազգիներից սիզախոտեր, շյուղախոտ, բարձր րազգրաս, ուղնախոտ, ցորենուկ, սանրանման չալիր, ագրոխոտուկներ, դաշտավուկ, սերինոսահատ, աղվեսագի, արվանդակ, գարի, աշորա և ուրիշները:

Այլագգիներից արտադրության մեջ մտցնելու համար հետաքրքրություն են ներկայացնում՝ քարխոտը, կոխիան, զանազան տեսակի աղաբույսեր և ուրիշները:

Վայրի խոտաբույսերից շատերը, մանավանդ թիվեռնածուկ-կալոբների ընտանիքին պատկանող բույսերը, ունեն մեծ քանակությամբ պինդ քարացած սերմեր, որի պատճառով կուլտուրայում ցանելու դեպքում համատարած չեն ծլում և մինչև ցանելը պահանջում են որոշ նախապատրաստում (սկարիֆիկացիա, թիռներով աղդելը և այլն): Բայց բնության մեջ կան նաև պատրաստի սորոտեր, որոնք ցանելուն պես շատ լավ աճում և բազմանում են:

Անասնապահական խնամքի միջոցով ցույց են տվել, որ շատ վայրի բույսեր կուլտուրայում տալիս են խոտի միանգամայն լավ բերք հենց առաջին ցանելուց հետո: Օրինակ, մեր վայրի սիզախոտը, որն արդեն Կալինինոյի և Ստեփանավանի շրջաններում արմատավորվել է, տալիս է լավ պայմաններում մինչև 70—80 ց., իսկ միջակ պայմաններում՝ 40—50 ց. խոտ:

Հարկավոր է նշել, որ խոտաբույսերի ամենալավ սերմը կուրելի է հավաքել զանազան դոտիների կենտրոնական մասերում, գոտիի կամ բույսի առաջման արեալի ծայրամասերում սերմը լինում է որակով ոչ բարձր: Հավաքման ժամանակ այդ պետք է հիշել և աշխատել սերմահավաքը կենտրոնացնել բույսի արևալի կենտրոնական մասերում:

Հայաստանում հայտարարված է վայրի խոտաբույսերի հետևյալ մասսիվները՝

1. Ստեփանավանի շրջանի Պուշկինո, Կուլբիշև, Արմանիս, Կաթնաղբյուր գյուղերի և Լոռու տոհմային սովխոզի առաջին ֆերմային կից Աղլաղան սարի լանջերում հնարավոր է հավաքել մեծ քանակությամբ սիզախոտ (*Phleum pratense*), շյուղախոտ (*Festuca pratensis*), բարձր բաղդաս (*Arrhenatherum elatius*), ալծուկ (*Galega orientalis*), կարմիր երեքնուկ (*Trifolium pratense*), վարդազույն երեքնուկ (*Trifolium ambiguum*), քորխոտ (*Symphytum asper*), երկարատերև գաշտավուկ (*Poa iberica*), ողնախոտ (*Dactylis glomerata*):

2. Լոռու տափաստանի ձորակների խոտածածկոցներում կարելի է հավաքել սերինոսահատ (*Digraphis arundinacea*), շյուղախոտ (*Festuca pratensis*) և աղվեսագի (*Alopecurus arvensis*):

3. Կալինինոյի շրջանի Բլազոպարնի, Կարակալա, Իրմադ-
չուս դյուզերի խոտհարքներում հնարավոր է հավաքել մեծ քա-
նակությամբ երեքնուկ մասնավորապես վարդադույն երեքնուկի
և շուգախոտի (*Festuca pratensis*) սերմեր:

4. Ղարախաչի Սարվանչայ անունը կրող մասսիվում կարե-
լի է հավաքել մեծ քանակությամբ սիդախոտ (*Phleum pratense*),
շուգախոտ (*Festuca pratensis*), ուլնախոտ (*Dactylis glomerata*)
վարդազույն և կարմիր երեքնուկներ:

5. Կիրովականի շրջանի Կիրովականի փորձնական անսառա-
մասում կարելի է հավաքել մեծ քանակությամբ այծուկի (*Galega*
orientalis) սիզախոտի և ուլնախոտի սերմ:

6. Դիլիջանի և Սեանի շրջաններում Էշակ-Մեյզան կոչվող
մասսիվում հնարավոր է հավաքել մեծ քանակությամբ սիզախոտ,
սղնախոտ, քարխոտ (*Symphytum*) և բազմաթիվ երեքնուկների
սերմեր:

7. Սեանի տվաղանի դեռավների մարդագիտիներում կարելի
է հավաքել կատաղույն գարու, դաշտավլուկի, ագրիտոտուկի և ե-
րեքնուկների սերմեր:

8. Արադածի (Ալադյադ) հարավ-արևմտյան և հարավային
լանջերի ստորոտներում հնարավոր է հավաքել սանրանման չալիր
(*Agropyrum cristatum*):

9. Սանրանման չալիր կարելի է հավաքել հաս Արզնիի ձո-
րում:

10. Միկոյանի շրջանի հարավային լանջերում հնարավոր է
հավաքել սանրանման չալիրի և վայրի առվույտների սերմեր:

11. Զանգեզուրի Բորիսովկա, Բազարչայ, Մալիբար դյուզերի
խոտհարքներում մեծ տարածություններ են զբաղեցնում երեքնուկ-
ները:

12. Ալմաղանի հարավային լանջերի ստորոտներում հնարա-
վոր է հավաքել սանրանման չալիր (*Agropyrum cristatum*),
Բորզիլովսկու երեքնուկը (*Trifolium Bordzilowsky*) և վայրի
առվույտների սերմեր:

13. Ծաղկունք, Դդմաշեն (Սևանի շրջան) գյուղերից դեպի է-
շակ-Մեյզան տանող ճանապարհի ձորերի զեառափնյա մարգերում
կարելի է հալվաքել անքիտ ցորենիկ սերմը (*Bromus inermis*):

3. ՎԱՅՐԻ ԽՈՏԱՐՈՒՅՍԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՎ ՆՐԱՆՅ ՀԱՏԿԱՆՈՇՆԵՐԸ


Սերմահատվաքը լավ կազմակերպելու համար անհրաժեշտ է ի-
մանալ, թե ինչպիսի՜ առանձնահատկություններ ունեն վայրի խո-
տաբույսերը, թե բնության մեջ ինչպես կարելի է վայրի խոտա-
բույսերին սրռել—իմանալ ո՞ր տեսակին պատկանելը: Դրա համար
բերում ենք նրանց նկարագրումը:

Սիգախոս (սիմոֆեեվկա)—(Тимофеевка—Phleum L)

Հայաստանում բնական վիճակում տարածված սիգախոտերից
ուրմահատվաքի համար արժեք են ներկայացնում հրեք տեսակները,
որոնք կերի տեսակետից հաշվվում են բարձր արժեք ունեցող բույ-
սեր և բնական արոտներում, խոտհարքներում ու արհեստական
մարգագետիններում կարևոր դեր են խաղում և տալիս են բարձր
բերք:

1. Մարգագետնային սիգախոտ—(Тимофеевка луговая —Phleum pratense L)

Բազմամյա, նոսր թփակալած բույս: Յողունները բազմաթիվ
են, ուղիղ կամ բարձրացող, 60—70 սմ բարձրությամբ և լավ առ-
րակալած: Տերևները 3—10 մմ լայնությամբ, ծաղկաբույլը խիտ,
ղլանաձև, ծոկլիս միում է հարթ: Տարածված է նախալեռներում և
բարձր լեռներում, տափաստանային, անտառային և սուբալպյան
գոտիներում: Խոնավ շրջանների ցանքաշրջանառությունների խո-
տախառնուրդների համար անփոխարինելի կոմպոնենտ է: Տալիս է
մաքուր ցանքում մինչև 70 ց. խոտ (նկար 1):



Նկ. 1. Մարգագենային սիզախոտ (*Phleum pratense* L.). A—բնդհանուր տեսքը, B—սիզախոտի ծաղկափթիթույունը, C—սերմը (մեծացրած)։

2. Տափաստանային սիզախոտ—(Тимофеевка степная—*Phleum phleoides* (L) Simk)

Բույսն առաջացնում է մի քանի տեսակի ծաղիկներ, որոնցից շատ են և ուղիղ, 50—80 սմ բարձրությամբ։ Մաղկարույլը նեղ պլանաձև, խիտ։ Ծուկիս առաջանում են պսակաձևեր, որով և կարելի է լավ տարբերել առաջինից։ Տարածված է չոր տափաստանային գոտիից մինչև սուբարկտիկ գոտին։ Միջակ խոնավության պայմաններում առկա է լավ բերք։ Չոր շրջանների խոտախառնուրդների համար

կարող է ունենալ այնպիսի նշանակություն, ինչպիսի նշանակու-
թյուն ունի մարդագետնային սիզախոտը խոնավ շրջաններում
(նկար 2):



Նկ. 2. Տափաստանային
սիզախոտ (*Phleum
phleoides*):

3. Ալպյան սիզախոտ—(Тимофеевская альпийская—*Phleum alpinum* L.)

Բազմամյա բույս. կազմում է ոչ խիտ
թփեր: Յուղունները 10—15 սմ բարձ-
րությամբ, երբեմն մանիշակագույն:
Ծաղկաբույլը խիտ, կարճ-դանաձև
կամ ձվաձև երկտրավուն: Տարածված
է ենթալպյան և ալպյան գոտիներում:
Արտոններում լավ կերաբույսերի շար-
քում է դասվում: Կարող է դեր խաղալ
արոտների խոտակազմը լավացնելու
պարծում:


Շյուղախոտ—(Овсяница—*Festuca* L.)

Հայաստանում տարածված են շյուղախոտի մի քանի տեսու-
կները, բայց սերմահավաքի համար խոշոր նշանակություն ունի
միայն մեկը, այն է՝

Մարգագետնային շյուղախոտ—(Овсяница луговая— *Festuca pratensis* Huds.)

Բազմամյա, նոսր ճիւղ առաջացնող բույս: Յուղունները բարձր
(մինչև 100 սմ) և լավ տերեւակալած: Տերեւները 2—3 մմ լայնու-
թյամբ, արտաքին կողմից փայլուն, իսկ ներքին կողմից՝ ոչ: Հու-
րանը միակողմանի, փոքրիշատե սեղմված, ծաղկելու ժամանակ
թեթևակի չուլած: Ճյուղերը բաժնավորվում են կարճ: Հասիկները կանաչ
կամ թեթևակի մանիշակագույն, 3—10 ծաղկով: Տարածված է տա-

փաստանային, անասնաչին և սուրալպյան դոտինների խոտհարք-
ներում և ջրովի այգիներում: Ունի խոշոր նշանակություն խոտա-
խառնուրդների համար (նկար 3):



Նկ. 3. Մարգագետնային շյուղախոտ (*Fectuca pratensis* Huds).


А — ընդհանուր տեսքը, В — սերմը (մեծացրած):

Ոգնախոտ—(Ежа сборная—*Dactylis glomerata* L)

Պատկանում է նոսր ճիմ առաջացնող բազմամյա խոտաբույ-
սերին. ունի կարճ, սողացող կոճղարմատներ, 120—150 և ավելի
սմ բարձրություն ունեցող ցողուններ: Թյփի հիմքում ողնախոտն
ունի մեծ քանակությամբ տերեւներ, որոնց թիթեղը երիտասարդ հա-
սակում երկարությամբ ծալված է: Լեզվակը ծոպավոր է: Հուրանի
երկարությունը հասնում է 8 սմ-ի, ունի երկար ճյուղեր, որոնց յու-
րաբանջուրի վրա կա հասկիկների մի քանի կնձիկ: Սերմը պառ-

կում է կողքի վրա և ոչ մեջքի: Սերմի փորիկի հիմքում կա մի փոքրիկ «ոտիկ», որը կարող է ծառայել որպես որոշիչ:

Տարածված է անտառային և սուբալպյան դոտիներում, խոնավ սլաքամաններում: Կուլտուրայում ողնախոտը տալիս է բարձր բերք և երկու-երեք քաղ: Նույն տեղում ողնախոտը կարող է աճել ավելի քան 10 տարի (նկար 4):



Նկ. 4. Ողնախոտ (*Dactylis glomerata* L).
A—ընդհանուր տեսքը, B— սերմը (մեծացրած):

Բարձր բայգրաս — (Райграс высокий — *Arrhenatherum elatius* (L) M et K)

Բազմամյա, նոսր ճիւղ առաջացնող, մինչև 120 սմ բարձրությամբ ցողուններով խոտաբույս է: Տերևները տափակ են՝ 3—7 մմ լայնությամբ, կողքերից սուր խորտուրտա, լիզվակը 2 մմ երկարությամբ, բութ: Հուրանը սեղմված, մինչև 25 սմ երկարությամբ

և կարճ ճյուղերով: Հասկիկները 7—9 մմ երկարությամբ, երբեմն մանիշակագույն: Տարածված է անտառային և սուբալպյան դո-տինների քարքարոտ լանջերում: Կուլտուրայի մեջ տալիս է բարձր բերք և երկու քաղ: Ցանքաշրջանառություններում կազմում է խո-տախառնուրդների բաղադրիչ մասը: Կորնզանի, առլույտի հետ միասին ցանված բարձր լայգրասի բերքը կարող է հասնել մինչև 80—100 ցենտներ մեկ հեկտարից: Բայգրասի սերմի կայուն բա-զայի ստեղծումը հանդիսանում է խոտացանության կարևոր խըն-դիրներից մեկը (նկար 5):

Աղվեսագի (Բզրուկ)—(Лисохвост—Alopecurus L)


Աղվեսագիները պատկանում են բարձրարժեք կերատու բույ-սերի խմբին: Նրանց մեջ կան այնպիսիները, որոնք կարող են մեծ դեր խաղալ անասնապահության համար, արհեստական վաղ դար-նաճային արոտների ստեղծման դործում: Աղվեսագին ամենավա-ղահաս բույսն է:

1. Փրված աղվեսագի—(Лисохвост вздутый—Alopecurus ventricosus L)

Նոսր ճիւղ առաջացնող, բողմամյա բույսերի շարքին է պատ-կանում: Ցողունները դորշավոն-կանաչ, 60—80 սմ բարձրու-թյամբ, սողացող ընձյուղներով: Տերևները սուր—խորտուքուք, տափակ, 6 մմ լայնությամբ, հարթ ծոցով և կլոր ու կարճ լեզվա-կով: Հուրանը գլանաձև, 6—10 սմ երկարությամբ: Հասկիկները սափորաձև և երկար ուրվագծով: Ծաղկաթիկը անքիստ: Տարած-ված է տափաստանների և նախալեռների խոնավ և ճահճացած տե-ղերում:


2. Հայկական աղվեսագի—(Лисохвост армянский—Alopecurus armenus (C. Koch.) Grossh. Alopecurus pratensis V. armenus C. Koch.)

Ունի 40—150 սմ բարձրությամբ ցողուն և կարճ ստորերկրյա ընձյուղներ: Հուրանը գլանաձև, ավելի կարճ (3—8 սմ) և հաստ (մինչև 15 մմ), քան փրված աղվեսագու հուրանը: Ծաղկաթիկովը քիստավոր, ծնկաձև: Տարածված է մինչև 2200 մ բարձրության



Նկ. 5. Բարձր լայգրատ (Arrhonatherum elatius (L.) M et K).
 A—ընդհանուր տեսքը, B—սերմը ծաղկաթևի ուղեղի մեջ, C—սերմը առանց
 ծաղկաթևի ուղեղի:

վրա, միջին լիսների խոնավ և ճահճացած մարզադեպիներում (նկար 6):



Նկ. 6. Աղվեսաղի մարզադեպիներ. A— ընդհանուր տեսքը, B— սերմը
ծաղկաթևափուկներով, C— սերմը մեկը:

Դիգրաֆիս — (Диграфис — *Digraphis arundinacea* (L) Trin — *Phalaris arundinacea*)

Լավ տեսակի կերատու բույսերի շարքին է պատկանում: Տա-
լիս է մեծ բերք, ունի մինչև 2—2,5 մետր բարձրություն: Հացադ-
ղիներից ամենալավ տերեւակալած բույսն է հանդիսանում: Դի-
գրաֆիսը ցրտադիմացիուն է և զարնանք շատ շուտ է սկսում աճել:
Տալիս է երկու քաղ և հեկտարից մինչև 60 ցենտներ խոտ: Հուրա-
հը սեղմված է, հաճախ կարմրավուն, հասկիկները կարճ կոթով,
նշտարած: Ծաղկաթևիկները փայլուն են և վերին մասում մազոտ:
Տարածված է տափաստանից սկսած մինչև միջին լիսների խոնավ
մարզադեպիներում, ճահճների ծայրամասերում, գետափներում:

Մյուսսավուկ—(Мятлик—Poa L)

Մյուսսավուկները մեծ դեր են խաղում Հայաստանի մարգագետինների խոտածածկոցում: Նրանց մեջ կան այնպիսիները, որոնք կուտորայի մեջ կարող են դառնալ խոտախտանորոգների համար լավ բաղադրիչ, հատկապես արհեստական արոտների համար:

Մարգագետնային դաշտավուկ—(Мятлик луговой—Poa pratensis L)

Բաղմամյա, նոսր թիակալող բույսերի շարքին է պատկանում: Յուղունները ունեն 30—90 սմ բարձրություն, հուրանը՝ 5—20 սմ



Նկ. 7. Մարգագետնային դաշտավուկ (Poa pratensis L):
Ընդհանուր տեսքը:

երկարություն, տերեւները մինչև 4 մմ լայնություն, լեզվակը՝ բուխ։ Տերեւը ծայրում ունի կալիարիչի ձև։ Տարածված է ցածրավայրերի և միջին լեռների մարգագետիններում և այգիներում։ Ունի խոշոր նշանակութուն արհեստական արոտների ստեղծելու համար (նկար 7)։

Ալպյան դաշտավուկ—(Мятлик альпийский—*Poa alpina* L.)

Բաղամայա, ցածրահասակ, նոսր ճիւղառաջացնող բույսերի խմբին է պատկանում. ցողունները մինչև 30 սմ բարձրությամբ, տերեւները լայն, առիակ, լեզվակը երկարավուն, մինչև 4 մմ երկարությամբ։ Հոտերն խիտ, ձվաձև, 2—7 սմ երկարությամբ։ Հասկիկները լայն են, ձվաձև, մանիշակադույն։

Տարածված է բարձր լեռների ալպյան և սուբալպյան դոտի-ների արոտներում։

Երկարատերև վաշտավուկ—(Мятлик длиннолистный—*Poa iberica*)

Բաղամայա, երկարատերև և բարձր ցողուններով (մինչև 150 սմ) հացադդի։ Տերեւ տափակ, 4—10 մմ լայնությամբ, թևեղակի սուր-խորտուրորտ։ Լեզվակը ունի մինչև 3 մմ երկարություն։ Հասկիկները կանաչ են, երբեմն թևեղակի մանիշակադույն։ Տարածված է անտառային և սուբալպյան գոտիներում։ Վաղահաս արոտային բույս է և ունի սիլոսային կուլտուրայի նշանակություն։

Սպիսակ ագրիստուկ—(Полевица белая—*Agrostis alba* L.)

Բաղամայա բույս, բարձրությունը 30—120 սմ, տերեւները տափակ, լեզվակը երկար, սուր, 2—4 մմ երկարությամբ։ Ստորին ծաղկաթևափուկները առանց քիտի են և երկու-երեք անգամ վերևի-նից երկար։ Տարածված է մինչև 2000 մ բարձունքների խոնավ մարգագետիններում, անտառային բացուտներում, այգիներում։

Արհեստական մարգագետինների համար որպես խոտախառնուրդների բաղադրիչ ունի խոշոր նշանակություն (նկար 8):



Նկ. 8. Սպիտակ ագրիստուկ (*Agrostis alba* L):
Ընդհանուր տեսքը:

Գարի—(Ячмень—*Hordeum* L)

Մանիշակագույն գարի—(Ячмень фиолетовый—*Hordeum violaceum* Boiss et Huet)

Բաղմամյա, նոսր-թիավալող, լավ տերեւակալած, մինչև 1 մ բարձրություն ունեցող մարգագետնային խոտաբույս է, որի հասկերը մուգ-մանիշակագույն են:

Տարածված է Հայաստանի բարձր լեռնային գոտիներում մինչև 2100 մ բարձրության վրա գտնվող գետափնյա մարգագետիններում:

Կոնդեզակիր գարի—(Ячмень клубненосный—Hordeum
bulbosum L)

Բաղամայա, մինչև 100—150 սմ բարձրություն ունեցող խոտաբույս է: Ցողունները հիմքում կոճղեզանման են և հաստ: Ունի բարձր ցրտադիմացկունություն և երաշտադիմացկունություն: Հետաքրքիր է սևումնասիրել որպես խոտախառնուրդի բաղադրիչ:

Տարածված է Հայաստանի ջրովի խոտհարքներում (օրինակ, Թալինի շրջանում): Սերմի հավաքումը դժվարություն չի ներկայացնում:

Տաբեկան, աեռա—(Рожь—Secale anatolicum Boiss)

Բաղամայա, 60—90 սմ բարձրությամբ, ճիմ առաջացնող բույս: Տերևները նեղ, գորշ կանաչ, մերկ, տափակ, երբեմն կիսաողորած: Հասկը խիտ, մինչև 10 սմ երկար, տափակ:

Տարածված է քարքարոտ լանջերում, տափաստանային պայմաններում:

Հետաքրքիր է որպես բաղամայա բույս, որը վաղ գարնան կարող է տալ արհեստական արոտներ:

Ցորնուկ—(Костер—Bromus L)

Հայաստանի մարգագետիններում ցորնուկը շատ տարածված բույս է: Ամենից շատ տարածված են բաղամայա տեսակները ինչպես *Bromus variegatus*, *B. inermis*, *B. riparius* և ուրիշները, որոնք կուլտուրայի համար հետաքրքրություն չեն ներկայացնում: Խոշոր նշանակություն ունեն կերի բաղադրի ստեղծման և էրոզիայի դեմ պայքարելու գործում միայն նրանց բաղամայա տեսակները:

Անքիստ ցորնուկ—(Костер безостый—Bromus inermis Leyss)

Բաղամայա, կոճղարմատավոր, ցրտադիմացկուն և երաշտադիմացկուն, լայնատերև խոտաբույս: Կուլտուրայում 1 հեկտարից



տալիս է 20-ից մինչև 50 ցենտներ լավ սրակի խոտ: Յողունները 50—140 սմ բարձրություն բնեն և զերջանում են 10—15 սմ հուրանով: Տերիները տափակ, 4—9 մմ լայնությամբ, ունի փակված տերևածոց: Մեծ տարածություններ չի զբաղեցնում, պատահում է փոքր հողակտորներով, ձորերի ջրափնյա մարգագետիններում: Սերմը տափակ է, 7—9—12 մմ երկարությամբ, մուգ-դարչնագույն է (նկար 9):

Նկ. 9. Անքիստ ցորենիկ (*Bromus inermis* Leyss):
Բնականուր տեսքը:

Խայտաբեկ ցորենիկ—(*Косерп нестрийи*—*B. variegatus* M. B.)

Բազմամյա, կաղմում է մինչև 1 մ բարձրություն ունեցող ցողուններով ճիմեր: Տերևածոցերը մերկ են, ամբողջական կամ գուրահեռ թելիկների բաժանված (ոչ ցանցային). հասկիկները մուգ-մանուշակագույն, 5—7 ծաղկով: Ստորին ծաղկաթիփն ունի ուղիղ բիսա, 5—10 մմ երկարությամբ: Միջին և բարձր լեռնային արոտների և խոտհարքների խոտածածկույում գրավում է մեծ տեղ:

Ափնային (ուղիղ) ցորնուկ—(Костер береговой (прямой)—
B. riparius Rehm)


Բազմամյա խոտաբույս է, 30—90 սմ բարձրություն ունեցող
ցողուններով և կարճ սողացող կոճղ-արմատով: Յուղունները հիմ-
քում պատված են չորացած թույլ-ցանցային ծոցերով: Հուրանը
նոսր է, 10—15 սմ երկարությամբ, ստորին ծաղկաթևեր ուղիղ
քիստով, համարյա մեկ կամ թեթևակի թավառ, 5—7 շղուլ:

Տարածված է նախալեռնային, միջին լեռնային, տափաստա-
նային գոտիների պայմաններում:

Չայիր—(Пырей—Agropyrum L)

Սանրանման չայիր—(Житняк гребенчатый—Agropyrum
cristatum (L.) Gaerthn)

Բազմամյա, նոսր-թփախաղող հացազգի, 40—50 սմ բարձրու-
թյամբ, երաշտազիմացկուն, ցողունները լավ և շատ տերևախաղած:



Նկ. 10. Սանրանման չայիր (Agropyrum cristatum (L.) Gaerthn):

Հասկիկները համարյա հարիզտական, 3—10 ծաղկով: Հասկը խիտ, հասկիկների միջև անորոշ արանքներով, երկաբաժնուն-ձվաձև, վերևում նկատելի նեղ, սանրաձև: Յողունը հասկի տակ թույլ խոտուբորտ կամ կարճաթև: Ստորին ծաղկաթևիք քիստավոր, վերինը՝ գաղաթին երկատամ:

Այս բույսը տարածված է տափաստանային և մոսամբ կիսատափաստանային գոտիների արոտավայրերում և խոտհարքներում: Ունի տնտեսական խոշոր նշանակություն: Շատ երաշտադիմացիուն և ցրտադիմացիուն է:

Չոր շրջանների ցանքաշրջանառությունների խոտախառնուրդների գլխավոր բաղադրիչն է հանդիսանում (նկար 10):

Սողացող չալիր—(Пырей ползучий—*Agropyrum repens* L.)

Բազմամյա, կոճղ-արմատավոր բույս է: Կոճղարմատները երկար են և պինդ, հողի տակ կազմում են ուժեղ ցանց: Յողունները 50—80 (150) սմ, հարթ, տերևածույր մերկ, տերևը վերևից սուր-խորտուրտ, տակից հարթ, թխակապտավուն-կանաչ: Տերևի վրա երեք բարակ ջիղերը մեկընդմեջ միանում են երկու հասակ հետ:

Այս բույսը տարածված է մարգագետիններում, գլխավորապես խոզաններում, ցրտադիմացիուն է և երաշտադիմացիուն, աճում է արադ և կարող է ծառայել ողողված լանջերը ամրափնելու համար:

Արվանդակ—(Свинорой—*Cynodon dactylon* (L) Pers)

Բազմամյա, կոճղարմատավոր բույս է: Ունի ամուր, երկար կոճղարմատ, ճյուղավորվող ու սողացող ընձյուղներ և բարձրացող ցողուններ: Ծաղկաբույլը 3—8 հասկանման ճյուղերով: Լեզվակը փոքր, թարթիչավոր:

Տարածված է ցածրավայրերի, պլուզամերձ արոտների խոտածածկույում: Ունի խոշոր նշանակություն արհեստական արոտների կազմակերպելու, ֆուտբոլի և տերողրոմների դաշտ ստեղծելու համար:

Երեքնուկ—(Клевер—*Trifolium* L)

Երեքնուկները խոշոր դեր են խաղում Հայաստանի բնական արոտների և խոտհարքների խոտածածկույթներում: Խոնավ շրջանների արհեստական խոտացանության հիմքը կազմում են երեքնուկները:

Կարմիր երեքնուկ—(Клевер красный—*Trifolium pratense* L)

Երկամյա կամ բազմամյա մարգագետնաշին բույս, 50—60 սմ բարձրությամբ. պատկանում է թիթեռնածաղկավորների ընտանիքին: Գլխիկները ձվաձև են կամ խնձորաձև, հիմքում պատված երկու իրար մոտիկ տերևներով՝ լայնացած տերևակիցներով: Բաժակը շատ ավելի կարճ, քան պսակը: Բաժակի տառանները խողանաձևն են, որոնցից ստորինը երկու անգամ երկար: Պսակը ծիրանի: Տերևները էլիպսաձև կամ հատկաձև, մանրատափ եղբով: Ամբողջ բույսը թեթևափայլ:



Նկ 11. Կարմիր երեքնուկ
(*Trifolium pratense* L)

Տարածված է մարգագետնադաշտային, անտառային և բուսալպյան գոտիների խոտածաղկոցներում: Հայաստանի ցանքաշերտային բույսերի խոտախառնուրդներում պետք է մեծ տեղ զբաղի (նկար 11):

Վարդագույն երեքնուկ—(Клевер розовый—*Trifolium ambiguum* M.B.)

Բազմամյա, 8—60 սմ բարձրություն ունեցող ցողուններով բույս է: Արմատը ուղիղ առանցքավոր, գլխիկները ցողունի վերջում մեկից երեք երկար տոտիկների վրա, ծաղկման սկզբում գլխ-



Նկ. 12. Վարդազույն երեքնուկ —
(*Trifolium ambiguum* M. B.)

Սպիտակ (սողացող) երեքնուկ —
(Клевер ползучий—*Trifolium repens* L)

Բաղձամյա, ոչ բարձր բույս է։ Ունի երեք տերևանի սողացող ցողուններ։ Գլխիկները երկար առտիկների վրա, զնդաձև։ Պսակը սպիտակ, երբեմն վարդազույն, ծաղկելուց հետո դորշագույն։

Տարածված է գլխավորապես բարձր լեռնային բնական առտաներում։ Ունի խոշոր նշանակություն արհեստական արոտների ստեղծելու համար (նկար 13)։

դաձև, հետո երկարավուն, ձվաձև, պսակը սպիտակ, ծաղկման վերջում կարմրավուն. սնդր ունի 1—2 սերմ։

Տարածված է ամբողջ Հայաստանում և հանդիսանում է շատ արժեքավոր բույս արհեստական արոշմամյա մարդագետիկներ ստեղծելու համար (նկար 12)։



Նկ. 13. Սպիտակ երեքնուկ —
(*Trifolium repens* L)

Բորդզիլովսկու երկբնուկ—(Клевер Бордзиловского—*Trifolium Bordzilowskyi grossh*)

Մինչև 50 սմ բարձրություն ունեցող բազմամյա երկբնուկ: Գլխիկները 1—5 սմ, երկար ոտիկների վրա, ծաղկելուց հետո ձվաձև: Պսակը ուղիատի, հետագայում դեղին: Ունդը ունի 1 սերմ:

Տարածված է Ախտայի և Կոտայքի շրջաններում, Աղմաղանի հարավային լանջերում:

Գալեգա արևելյան (այծուկ)—(Галега восточная (КОЗЛЯТНИК)—*Galega orientalis Lam*)

Բազմամյա, 120—140 սմ բարձրությամբ, խիճեռնածաղկավարձերի բնատնիքին պատկանող, զրառդիմացիուն, երկար արմատներ առաջացնող բույս: Արմատները խալիանցում են հողի ներքին շերտերը մինչև 60—85 սմ խորությունը: Յուղունը ուղղաձիգ է, ունի փալեռն կանաչ դույն, տերևները կենտ, գիտարային, 14—26 սմ երկարությամբ, չորաբանջույց տերևը բազկապսած է 9-ից մինչև 15 տերևիկներից: Յուղունի ներքին մասի տերևիկները ձվաձև են, խի վերին մասին՝ երկարափունձված: Վերին տերևիկը վերջանում է փոքրիկ փշիկով: Յուղունը չորայուր բույսի վրա տեղավորված են 3—4 ուղղանիստ ծաղկեփառ, սրտնից յուրաքանչյուրն ունի 50—55 ծաղիկ: Ունդի երկարությունը 3—4 սմ, լայնությունը 2,5—3 մմ: Ունդի մեջ պտնվում է 3-ից մինչև 7 սերմ: Սերմը պերնոտան է, ձևով նման է սոփյույրի սերմին, բայց նրանից մեծ: Մեկ հեկտարից ստվի



Նկ. 14. Գալեգա (*Galega orientalis*),

է մինչև 70 ց. խոտ: Մեկ անգամ ցանված այժուկը մինչև լինում կարող է տալ բերք մինչև 10 և ավելի տարիների ընթացքում:

Տարածված է անտառային գոտիներում, նոսրացած անտառներում, ծառաթիկերում և բացուտներում (նկար 14):

Վիկ (Գյուլուլ) — (Горошек, вика — *Vicia L*)

Հայաստանի մարգագետիններում գյուլուլը շատ տարածված բույս է, որից շատերը կարող են հանդիսանալ արհեստական խոտացանության համար որպես լավ սպիտակուցային կեր տվող բույսեր և խոտնուրդների բաղադրիչ: Հայաստանում տարածված մոտ 15 տեսակ գյուլուլից 5 տեսակը բաղմամյա են, մյուսները միամյա կամ երկամյա: Արհեստական խոտացանության համար բաղմամյա գյուլուլները խոշոր նշանակություն ունեն:

Փոփոխական վիկ — (Горошек изменчивый — *Vicia variabilis* Fr et Sint)

Բաղմամյա, 35—75 սմ և մինչև 150 սմ երկար, ցողունները թուլ, բարակ: Պսակը մանուշակագույն-երկնագույն կամ մանուշակագույն-վարդագույն: Ծաղիկները թիթեակի նոսր սղիւզիկներով:

Տարածված է մարգատափստոտանային և անտառային գոտիների մարգագետիններում:

Կնամ վիկ — (Горошек обрубленный — *Vicia truncatula* Fisch)

Բաղմամյա, 35—50 սմ, ցողունները մերկ, տերևները 7—13 չոխտակ, վաղաթուփ կլոր կամ կնտած, սլաք երեղ ծալքով: Պրսակը դեղին: Ունդը կարճ ոտիկի վրա, մերկ, երկու կողմից սրված, սև-գորշագույն, 25—30 մմ երկար: Ունդի մեջ 2—5 սերմ, համարյա գնդաձև կամ երկարավուն, սև-գորշագույն: Տարածված է անտառային և սուբալպյան գոտիներում՝ մինչև 2500 մ:

Բալանզի վիկ — (Горошек Баланзы — *Vicia Balansae* Boiss)

Բաղմամյա, 30—60 (100) սմ, ցողունն ամուր, թուլ ճյուղավորված: Տերևը վերջանում է երկար, քիչ ճյուղավորված բխիկով:

Պսակը դեղին-նարնջագույն: Ունդը կախված, մերկ, դադաթում սրված, գորշագույն, վերևում թույլ ծոված: Սերմը կլորավուն, տափակացրած, բազմազույն:

Տարածված է բարձր լեռների անտառներում և անտառային մացառներում, սուբալպյան մարզերում:

Բացի այս տեսակներից, կարելի է սերմ հավաքել նաև հետևյալ միամյա տեսակներից 1) *Vicia grandi flora*, 2) *Vicia picta*, 3) *Vicia angustifolia*, 4) *Vicia hyrcanica*, 5) *Vicia peregrina*, 6) *Vicia hajastana*, 7) *Vicia pannonica*, 8) *Vicia narbonensis*, 9) *Vicia serratifolia*: Հիշված գյուղացիների տեսակները կարող են մեծ նշանակություն ունենալ մերձֆերմային ցանքաշրջանառությանների համար, որտեղ մշակվում են միամյա թիթեռնածաղկավորները կանաչ. հյութալի կեր ստանալու համար:

Տափուլոռ—(Чина—*Lathyrus* L)

Տափուլոռները պատկանում են լավ տեսակի կերատու բույսերի շարքին, բայց մինչև հիմա վայրի տեսակներից կուլտուրայի մեջ չի մտցված, մինչդեռ շատերը, մանավանդ բազմամյա տափուլոռները, կարող են խառնուրդներում մեծ դեր խաղալ:

Բազմամյա տափուլոռներից Հայաստանում տարածված են.

Մոված տափուլոռ—(Чина согнутая—*Lathyrus incurvus* Roth)

Ցողունները 40—80 սմ, տերևները 4—5 զույգ, երկարավուն տերևիկներով, ողկույզները 5—7 ծաղկով: Մաղիկը մանուշակագույն գորշով և ավելի բաց գույնի թևերով և նավակով: Ունդը մանգաղաձև, կորացած: Սերմը մերկ:

Տարածված է մարգագետիններում, գետերի, լճերի ափերին:

Մարգագետնային տափուլոռ—(Чина луговая—*Lathyrus pratensis* L)

30—100 սմ, ցողունն անթև, տերևիկները երկարավուն կամ դժային-նշտարաձև: Պսակը վառ-դեղին: Ողկույզները 3—10 ծաղկով: Ունդը գծային, սև:

Տարածված է մարգագետիններում, թիրուտներում, ալդիններում և անտառների բացուտներում: Ունի խոշոր նշանակություն երկա-

րտակ արհեստական մարդագետիներ ստեղծելու համար (նկար 15),



Նկ. 15. Մարդագետանային տափուղու
(*Lathyrus pratensis* L.):



Նկ. 16. Պալարակիր տափուղու
(*Lathyrus tuberosus* L.):

Պալարակիր տափուղու—(Чина клубненосная—*Lathyrus tuberosus* L.)

25—100 սմ, ցուղունը ճյուղավորված, տերևիկները երկարափուն-էլիպսաձև, տերևակիցները կիսազնդաձև, տերևակիթերին հավասար: Պսակը վարդագույն կամ ծիրանի-կարմիր: Ուղեղյալները 3—7 ծաղկով: Ունի դժային, մերկ, 2,8—4 սմ երկարությամբ և 4—7 սմ լայնությամբ, սերմեր 4—6 հատ, մուգ-դուրջագույն և մանր պակրով:

Տարածված է մինչև 1800 մ բարձրությամբ առօրյա տաններում (նկար 16):

Անտառային տափուղո—(Чина лесная—*Lathyrus silvestris* L.)

Բազմամյա, 100—200 սմ, արմատները երկար, սողացող: Ցողունը թևալոր: Պսակը վարդագույն: Ունդերը հեռացված կամ հորիզոնական լինելով, երկարավուն-դժային, վերևում որածալր, 6—7 սմ երկար և 0,7—1 սմ լայն: Սերմը պնդած կամ երկարավուն, սնհարկ:

Տարածված է թփուտներում և անտառային բացուտներում:

Վարդագույն տափուղո—(Чина розовая—*Lathyrus roseus* Stev.)

Բազմամյա, 80—150 սմ, մերկ, ցողունները ճյուղավորված, տերևները վերջանում են չճյուղավորված բիսիկով: Ունդերը գծային, 32—45 մմ երկարությամբ և 5—7 մմ լայն: Սերմը 10—11 հատ:

Տարածված է Լուսի տնտաներում 1500—1800 մ բարձրություն վրա:

Կինաբարային տափուղո—(Чина киноваревая—*Lathyrus miniatus* M. B.)

Այս ցողունները թույլ են և գեանաառած. ունի 1 մետր երկարությամբ լայն թևեր. տերևալոթերը նեղ թևեր ունեն: Տերևիկները կլոր-էլիպսաձև են կամ հակաձվաձև: Ողկույզները 5—10 ծաղկով, փոքր ի շատե խիտ: Պսակը 17—20 մմ երկարություն ունի, վարդագույն է: Ունդը երկար, դժային:

Տարածված է մինչև 1800 մ բարձրության վրա դռնվող անտաներում, թփուտներում և ցանքսերի մեջ, որպես մոլախոտ:

Եղջեռալույս—(Лядвенец рогатый—*Lotus corniculatus* L.)

Բազմամյա, թրթռնածաղկավորների ընտանիքին պատկանող բույս: Ցողունները բարձրացող կամ պռկված, փոքր ի շատե բազ-



Նկ. 17. Եղջերադույա
(*Lotus corniculatus* L.):

բունք կարող են շորացիմացկուն պայմաններում աճելի լավ աճել, քան մեր ներկայումս մշակվող կորնգանը: Դրանցից բացի, նոր տեսակի կորնգանները կարող են ունենալ նոր արժեքավոր հատկություններ. այդ պատճառով պետք է սերմը հավաքել և նրանց հետ փորձեր կատարել:

Անդրկովկասյան կորնգան (Эскавкет закавказский -- *Onobrychis transcaucasica* grossh.)

Պատկանում է բազմամյա կորնգանների շարքին, ունի 40—60 սմ բարձրություն, ցողունը ճյուղավորված է, սառիին տերևները եր-

և՛ախիլ, 10—40 սմ երկար: Տերևիկները հակաձվածև Հովանոցները 5—6 ծաղկով: Պսակը դեղին: Ունդը 15—25 մմ երկար:

Տարածված է մարդագին տիներում (Աշտարակ) (նկար 17):

Կորնգան — (Эскавкет — *Onobrychis* Gaerth)

Հայաստանում ներկայումս մշակվում է կորնգանների տեսակներից ամենից լավը—*O. altissima* grossh., *O. transcaucasica* grossh. կամ, ինչպես այլ կերպ անվանում են, *O. antasiatica*:

Մեր Սիսիանի և Թալինի շրջանների կորնգանը տալիս է խոտի և սերմի մեծ բերք: Չնայած նրան, որ մեր ցանկող կորնգանը ամենալավն է, մենք կարող ենք դեռ բնության մեջ գտնել այնպիսիները, ո-

կար են և կոթունի վրա լինում են 6—10 զույգ: Տերեխները գծային էլիպսաձև, սրված ծայրով են: Վերևի տերեխները լինում են 10—12 զույգանի: Տերեխները նեղ-գծային են: Պսակն ունի 10—12 մմ երկարություն, վառ-վարդագույն մուգ գծեր, երբեմն վառ-ծիրանի կամ սպիտակ վարդագույն և կամ սպիտակ: Ունդի երկարությունը 6 մմ է, ունի 3—4 տառմ: Ողկույզները բազմաթիվ են:

Տարածված է չոր շրջանների լանջերում, գլխավորապես տափաստանային գոտիներում նկար 18)։



Նկ 18. Անդրկովկասյան կոբնգան:

Ամենաբարձր կոբնգան— (Эспаргет высочайший—*O. altissima* grossh)

Բազմամյա է, ցողունները մինչև 80—90 սմ բարձրությամբ,

մերի: Պսակն ունի 10—11 մմ երկարություն, լինում է միագույն կամ մանուշակագույն-վարդագույն, ավելի մուգ գույնի երկայնական ջղերով: Ունդի կատարն առանց ատամների է: Ունդն ունի 4—6 մմ երկարություն, խիստ ծածկված կարճ թավով:

Տարածված է մինչև սուբալպյան գոտիի մարդագետիկներում, թիստներում: Այս կոբնգանը վաղուց ի վեր մշակվում է:

Սուր եավականման կոբնգան— (Эспаргет остроладочный—*Onobrychis oxytropoides* v. *laxa* grossh)

Բազմամյա է, առանց ցողունի (երբեմն կարճ ստորին միջհանգույցներով) մինչև 15—30 սմ բարձրությամբ: Տերեխները բազկաձև են 7—13 զույգ տերեխներից: Պսակն ունի մինչև 15 մմ

երկարութիւն, գույնը՝ ծիրանի-մանիշակագույն: Ունդը 6—9 մմ է, ձվաձև-կիսաղնդաձև, կարճ, բայց խիստ թափուտ, սահորը 1—2 մմ լայն, հարթ եզերքով կամ սուր, բզանման, մինչև 2 մմ երկար տաամենբով:

Տարածված է մինչև ալպյան դոռու մարգագետիններում: Արտաների համար կարող է ունենալ խոշոր նշանակութիւն, որովհետև այս կորնդանի ծաղկումը և սերմնավորումը վերջանալուց հետո տերեւները շարունակում են աճել և մինչև աշուն ապահովում կանաչ մասսա, որի պատճառով և կուլտուրայում պետք է ուսումնասիրել:

Աւվուլյս — (Люцерна — Medicago L)

Հայաստանում տարածված են շատ տեսակի աւվուլյաներ, որոնք արտադրութեանում արմատավորելու նպատակով դեռևս ուսումնասիրված չեն, մինչդեռ դրանցից շատերը կարող են արոտների և խոտհարքների համար պիտանի խոտաբույսեր դառնալ:

Միամյա աւվուլյաները հետաքրքրութիւն չեն ներկայացնում: Անհրաժեշտ է հավաքել միայն բուղմամյա տեսակների սերմը:

Աւվուլյա ցանովի — (Люцерна посевная — Medicago sativa L)

Բաղձամյա, խորը թափանցող արմատով, ճշուղավորված ցողունով և թիթեռնածաղկավորների ընտանիքին պատկանող ամենաչափ կերատու բույս է: Տերեւիկները երկարավուն, հակաձվածի: Պսակը խիստ փոփոխական, բայց դեղին գույնից մինչև կապույտ և մանուշակագույն: Ունդն ունի 4—9 մմ տրամագիծ և 2—4 մմ շրջագիծ, ցանցաջիլը մերկ կամ թափուտ: Սերմը շաղանաչագույն է:

Տարածված է չոր լանջերի խոտածածկոցում, տափաստաններում և անառնների բացուսներում, թփուսներում, գետերի հովիտներում, ճանապարհների եզրերին, ցանքերում:

Աւվուլյա երկնագույն — (Люцерна голубая — Medicago coerulea Leyss)

Բուղմամյա, խորը թափանցող արմատով, ցողունները բարակ, մերկ, 50—70 (100) սմ բարձրությամբ խիտ տերեւածածկված բույս: Պսակը 5—6 մմ երկարությամբ, գույնը փոփոխական՝ երկնագույնից կամ մանուշակագույնից մինչև դեղնավուն-սպիտակ: Ուղիւղը

երկար, 9—10 ծաղկով, կարճ, ձվաձև կամ կլորավուն: Ունդն ունի 2—3 մմ տրամագիծ և 2—3 մմ շրջագիծ, մերկ է, երբեմն թավուտ: Քիչ է տարածված: Հայաստանում այս բույսի նշված վայրը Մհերն է (Կոտայքի շրջան)՝ հոշոր նշանակություն է ստանում դեմի հսկում մշակելու դեպքում:

Առվույտ կիսադուրված—(Люцерна полузакрученная—Medicago hemicycla Grossh)

Խորը և երկար արմատով բույս, ցողունները խիստ ճյուղավորված, 40—50 սմ բարձրությամբ, ուղիղ, համալս պտուկած, թույլ: Պսակը 8—10 մմ երկար, բաց դեղին դույնից մինչև երկնագույն և սև մանիշակագույն: Ունդը ծոված:

Տարածված է 900-ից մինչև 1500 մ բարձրության վրա գտնվող մարգագետիններում, արոտներում և անտառային բացույթներում:

Առվույտ բազմագույն—(Люцерна разноцветная—Medicago polychroa grossh)

Արմատները խոր և երկար, ցողունները մեկ արմատից և ճյուղավորված, ունի 30—60 սմ երկարություն, ողիւղըն ունի 10—40 ծաղիկ, պսակը լինում է մուգ-մանիշակագույն, երկնագույն, կանաչ, բաց դեղին և սպիտակ: Ունդը պարուրաձև-ոլորված, 2—3 շրջաններով: ունդի ամբողջ մակերեսը ծածկված է գեղձային ցլցված մազիկներով:

Տարածված է 500-ից մինչև 1500 մետր բարձրության լանջերի մարգագետիններում, դետերի հովիտներում և որպես մոլախոտ վարելահողերում: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում ուսումնասիրության համար:

Ջավախեթյան առվույտ—(Люцерна Джавахетская—Medicago Dzawakhetica Bordz)

Բազմամյա, արմատը խոր և երկար, ցողունը 10—25 սմ երկար, պտուկած կամ բարձրացող: Պսակը նարնջագույն կամ սուկեփալ-դեղին: Ունդը 2—4 անգամ պարուրաձև-ոլորված, մերկ, երբեմն ծածկված է կարճ մազիկներով:

Տարածված է ալպյան, սուբալպյան և անտառային գոտիների քարքարոտ մարգագետիններում: Հետաքրքիր է որպես արոտային բույս, դրա համար էլ անհրաժեշտ է հավաքել սերմը:

Իճառվույս—(Донник—Melilotus Adans)

Իճառվույսը հետաքրքիր բույս է այն իմաստով, որ կարող է լրացնել լրագրիների ասորոթիմենտը, և այնտեղ, որտեղ դեմի հողերում առվույսը և կորնդանը չեն դնում, իճառվույսը կարող է ճիշտն փոխարինել, որպես ավելի երաշտադիմացիկուն:

Ատամնավոր իճառվույս—(Донник зубчатый—Melilotus dentatus (W. K.) Pers)

Երկարամյա բույս. ցողունները ուղիղ կամ բարձրացող: Տերև-կիցիները հիմքի մասում լայնացած, ատամնավոր կտրտված, վերին մասում բլրաձև: Ծաղիկները բաց դեղին: Ունդերը կախված աղեղ-նաձև կորացած կոթերով:

Տարածված է Արզնու շրջապատում:

Սպիտակ իճառվույս— (Донник белый—Melilotus albus Desr)

Երկարամյա բույս. ցողունները ուղիղ, 30—150 սմ բարձրությամբ, տերև-վակիցների եզրերը բլրաձև, ծաղիկները սպիտակ, ունդերը ցած թևրված, ձվաձև, վերևում բութ, լայն մասում ծաղկավոր կոթերով:

Տարածված է Արզնիի և այլ շրջաններում (նկար 19),



Նկ. 19. Սպիտակ իճառվույս
(Melilotus)

Գեղին իշաովույտ—(Донник желтый—*Melilotus officinalis* (L.) Desr.)

Երկամյա մոլախոտ, ցողունները սովորաբար ուղիղ, 30—100 սմ բարձրությամբ, ծաղիկները դեղին, ավելի խոշոր, կախված: Ունիլը ցած թեքված, ձվաձև, բույժ, լայնքի վրա ծաղկավոր կոճիկներ:

4. ԻՆՉՊԵՍ ԱՌԱՆՋԱՅՆՆԵՐ ՍԵՐՄԱՐԱՆՆԵՐԸ

Վայրի խոտաբույսերի սերմի: Հավաքման դործում պետք է մորիլիզացվեն գլուպատնտեսության առաջավորները, կոմերիտականներն ու դպրոցականները:

Աերմահավաքը հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ է խմանալ ինչպե՞ս և ո՞րտեղ առանձնացնել սերմնարանները:

Խոտաբույսերի սերմը, ինչպե՞ս վերև տեսա՞ք, կարելի է հավաքել նախալեռներում, տափաստաններում և բարձր լեռնային դաշտիներում, ապա նաև դեռերի հովիտներում, անտառների բացույտներում, ալյուրներում և խոպաններում: Նշված հանգակների, արոտների և խոտհարքների վրա տարածված է տարբեր տեսակի բազմազան: բուսականություն: Մարգագետնի խոտածածկը կարող է լինել կերատու բույսերի մի որե՞տե՞ս առաջ, որը նմանվի ցանովի խոտաբույսերին: Պատահում են երկու կամ երեք տեսակ բույսից կազմված խոտածածկույցներ: Այդպիսիները տարածված են խոպաններում, ալյուրներում, դեռերի հովիտներում: Ամենից շատ տարածված են մեղ մոտ քսան-երեսուն և ավելի տեսակներից բաղկացած խոտը խոտածածկույցներ: Այդպիսի մարգագետիններում բարձր որակ ունեցող կերատու բույսերը ցիրուցան են արված և տեղ-տեղ փոքրիկ տարածություններով կազմում են մաքուր ցանքսի նման ծածկույցներ: Այս ծածկույցների բույսերը կարող են պատկանել դա՛նա. դան ընտանիքներին, բայց ամենից շատ պատահում են լորազգիների ընտանիքին պատկանող բույսեր՝ երեքնուկներ, վիկ, առվույտ, եղջերառվույտ, կորնդաններ և այլն:

Սերմ հավաքելու համար ամենալավ հողակտորները կլինեն նրանք, որոնց վրա բուսում է միայն մեկ բույս: Օրինակ՝ շուրջախոտը՝ խմնալ տեղում, ուղնախոտը՝ նախկին արխաջներում, երեքնուկը՝ խոպաններում և այլն: Այդպիսի հողակտորները չափով է

թույլ տալ հնձիլ, այլ պարտադիր կերպով պետք է թողնել սերմ հալաքելու համար: Բայց բնության մեջ նման մաքուր խոտածածկոցներ կաղմում են ոչ մեծ տարածություններ: Լավ տեսակի խոտաբույսերի առանձին հողակտորների ավելի շատ տարածված են ընդհանուր մարգագետինների տարածության մեջ: Ավելի հաճախ պատահում են երկու կամ երեք բույսերից բաղկացած խոտածածկոցներ: Սրանք և ավելի բարդ խոտակաղմ ունեցող խոտածածկոցները կարելի է թողնել որպես սերմնարան հետևյալ դեպքերում՝

1. Եթե հիմնական բույսի (որից ցանկանում ենք սերմ հալաքել) և մյուս բույսերի հասունացման ժամկետները չեն համընկնում, այսինքն՝ հրե նրանք հասունանում են զանազան ժամանակ, օրինակ, շյուղախոտը և տիմոֆեեկան: Առաջինը հասունանում է հուլիսի վերջերին կամ օգոստոսի սկզբին, իսկ երկրորդը՝ օգոստոսի վերջում կամ սեպտեմբերի սկզբին: Կամ, օրինակ, ողնախոտը, որը հասունանում է օգոստոսի վերջին, իսկ շյուղախոտը՝ օգոստոսի սկզբին, աղվեսագին՝ հունիսի վերջերին:

2. Եթե հիմնական բույսը (որից պետք է սերմ հալաքվի) և մյուս բույսերի սերմերը նկատելի կերպով տարբերվում են (ըստ քաշի կամ մեծության) այնպես, որ հնարավոր է հեշտությամբ խրարից անջատել, օրինակ՝ աղվեսագու և բոշխի սերմերը:

3. Եթե հիմնական կուլտուրան պատկանում է թիթեռնածաղկավորների ընտանիքին, իսկ խառնուրդը հացադրիներին, և մեկը զտնվում է խոտածածկոցի ներքևի հարկում, իսկ մյուսը վերևի: Այդ դեպքում երկուսիցն էլ կարելի է սերմ հալաքել: Սերմահալաքը կատարվում է երկու նվազ. օրինակ՝ առաջ հալաքվում է շյուղախոտը, հետո՝ երեքուկը:

4. Եթե հիմնական կուլտուրան աղբոտված է ցածր բարձրություն (մինչև 10—12 սմ) ունեցող բույսերով:

5. Եթե արժեքավոր բույսը աղբոտված է ալնալիսի մուլախոտերով, որոնց քաղհանը զմլարություն չի ներկայացնում (օրինակ, համատարած ողնախոտի կամ սիլվախոտի մեջ տարածված թիվաշները (Rumex) կարելի է հեշտությամբ արմատախիլ անել:

6. Եթե սերմնարանը ներկայացնում է բարդ խառնուրդ և հրնարավոր է ձեռքով հալաքել մի քանի տեսակի բույսերի սերմ, որոնց ընդհանուր քանակը կիսղմի ղգալի քաշ և կարգարացնի խոտհարքը սերմնարանի վերածելը:

7. Եթե խոտածածկույը կազմված է այնպիսի կերատու բույսերից, որ եթե ձեռքի տակ եղած միջոցներով հնարավոր չի ազատել իրարից, գտնե հավաքած խոտի սերմը կարելի է միատեղ ցանել։ օրինակ, երեքնուկը և տիմֆեեկան, ժիտնյակը և ցորենուկը, շյուղախոտը և դաշտախոտը և ուրիշները։

Ուրեմն, ամեն անգամ, երբ որոշվում է սերմի համար թողնել կամ չթողնել այս կամ այն մարգագետինը, պետք է վերոհիշյալ նկատառումները աչքի առաջ ունենալ։

Կոլխոզները և սովխոզները պետք է մարգագետիններից սերմ հավաքելու խնդրի շուրջը զոմարեն խորհրդակցելոթյուն, ամփոփեն կոլխոզնիկների երկարատե փորձը, սահմանեն սերմահավաքի բույսերի տեսակները և որոշեն, թե, որ հողամասերից ինչքան սերմ պետք է հավաքվի։

Գարնանը, երբ մարգագետինները կիսնաչեն, անհրաժեշտ է ձմեռվա նշված սերմնարանները ստուգել, թե իրոք այնտեղ կարելի է սերմ հավաքել, առանձնացնել և կազմակերպել այդ հողակտրոների պահպանումը և խնամքը։ Առանձնացումը կարելի է կատարել զանազան նշաններով— հողի կամ քարի կոշտերով։

5. ՍՆՐՄՆԱՐԱՆՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Սերմնարանները պահանջում են որոշ խնամք։ Սերմնարանը առանձնացնելուց հետո, անմիջապես պետք է կազմակերպել պահպանութուն։ Կոլխոզի նախագահը սերմահավաքը պետք է մտցնի արտադրական պլանի մեջ և սերմնարանը հանձնի պահակին, որի վրա է դրվում պատասխանատվությունը մինչև սերմահավաքը։ Իսկ խնամքը և սերմահավաքի ժամկետը որոշելը և սերմի հավաքմանը կազմակերպումը հանձնարարվում է խրճիթ-լաբորատորիաների վարիչին, կամ դպրոցի դասատուին, կամ կոլխոզի որևէ բրիգադիրներից մեկին։ Նրանք պետք է հետեն, որպեսզի որևէ պատահականության հետևանքով սերմահավաքը չձախուղվի։

Սերմադաշտերում ոչ մի զեպքում չի կարելի թույլ տալ կենդանիներ արածացնել։ Եթե սերմնարանը խոտհարք է, հարկավոր է արգելել դարնանը՝ կենդանիների արածացում։ Այդ բանը զփարչ է իրադրծել։ Եթե սերմնարանը արոտատեղ է, ապա հարկավոր է այն ցանկապատել սյուներով և մետաղալարերով կամ հատուկ պահակ կանգնեցնել։

Քարնանը, երբ դեռ խոտը չի բարձրացել, անհրաժեշտ է սերմ-
նաբանը պարարտացնել և 2—3 անգամ փոցխել: Առաջին հերթին
պետք է օգտագործել տեղում եղած լավ փոսած դոմազը, տալով
մեկը հեկտարին 20 տ, ապա և հաջորդին պարարտացում, այն է՝
սուպերֆոսֆատ՝ 3 ց. և ամրակալն սելիտրա՝ 1,5 ց.:

Սերմնաբանը հարկավոր է քաղհանել բոլոր տեսակի մոլա-
խոտերից, մանավանդ նրանցից, որոնց սերմի հասունացման



Նկ. 20. Գալլախոտով վարակված երեքնուկ:

շրջանը համընկնում է սերմացուի համար թուղած բույսի հասու-
նացման ժամկետին, որպեսզի ստացվելիք սերմը չաղբոսի:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել դաղձին: Դաղձը
(գալլախոտը) ամենավտանգավոր պարազիտն է հանդիսանում թի-
թեռնածաղկավոր բույսերի նկատմամբ (նկ. 20): Նրա սրտ դեմ,

մինչև սերմահավաքը, պայքար շտարվի, սերմը հավաքելուց հետո շատ դժվար է լինում լորագդինների սերմը դաղձի սերմից աճեցնելը, իսկ եթե լորագդինների սերմի մեջ լինի գոնե 1 կամ 2 հատ դաղձի սերմ, այդ սերմը չի թուլլատրվում ցանկել:

Դաղձի դեմ պայքարելու համար անհրաժեշտ է մինչև դաղձի ծաղիկներ մարդագեղձնում դաղձով վարակելած խոտը հնձել և դուրս բերել դաշտից ու այրել:

Մոլախոտերի դեմ պայքարելուց բացի, անհրաժեշտ է դարձնանք սերմնարաններում քարերը հավաքել և դուրս բերել սերմնարանից: Եթե ամառվա ընթացքում երևան գան հիվանդություններ, հարկավոր է մասնագետների ցուցմունքով արսիումներ կատարել: Անհրաժեշտ է հաև պայքարել մկների դեմ, որովհետև վերջինները սերմահավաքին շատ մեծ վնաս կարող են պատճառել:

6. ՍԵՐՄԻ ՀԱՍՈՒՆԱՅՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Լավ որակի սերմ հավաքելու համար մեծ նշանակություն ունի սերմի ժամանակին հավաքումը: Վայրի խոտաբույսերի սերմահավաքի դործում ամենակարևոր խնդիրն է հանդիսանում հասունացման ճիշտ ժամկետի որոշումը: Եթե սերմը հավաքվում է ոչ հասունացած շրջանում (հասունացման ժամկետից շուտ), սերմի որակը ընկնում է: Չհասունացած սերմերը փուչ են լինում: Այդպիսի սերմը, մաքրելուց հետո, կոնդիցիոնային համապատասխանող սերմ դառնալու համար շատ է պակասում, իսկ եթե սերմահավաքը ժամկետից ուշ կազմակերպվի, առաջ կգա սերմի մեծ կորուստ: Հետևաբար, թե՛ սերմահավաքի ուշացումը և թե՛ չհասունացած սերմի հավաքը մեծ կորուստներ է առաջ բերում: Ուրեմն, սերմը պետք է ճիշտ ժամկետին հավաքել: Բայց ճիշտ ժամկետը որոշելը այնքան էլ հեշտ չի, որովհետև զանազան բույսերի սերմի հասունացման շրջանը միատեսակ չեն ըլինում: Կան բույսեր, որոնց սերմը ցողունի վրա երկար ժամանակ պահվում է առանց թափվելու, իսկ կան և այնպիսիները, որոնք հասնելուց հետո շատ շուտ թափվում են, ինչպես օրինակ՝ բարձր թալլարախի, շյուղախոտի և այլ բույսերի սերմը: Սերմի հավաքման ժամկետը որոշելիս այդ հանգամանքը պետք է նկատի առնել և ամեն օր ստուգել սերմնադաշտը՝ հասունացման շրջանում: Սերմի հասունացման ժամկետը որոշում են հետևյալ նշաններով՝

1. Հայազգիների բույսերի ցողունի դադարը դեղնում է, իսկ թիթեռնածաղկավորների (ընդեղեններ) ծաղիկները դորշանում են և չորանում:

2. Եթե հայազգի բույսերի հասկերից կաղմենք մի փոքր փունջ և փնջով խփենք ձեռքի ափին, հասկի միջից դուրս կթափվի մի քանի սերմ: Լուրազգիների ծաղիկները տրորելուց, ձեռքում մնում են մի քանի հաստենացած սերմ:

3. Եթե սերմը եղունգով կտրվում է այնպես, ինչպես եղունգով կտրվում է մոմը, այսինքն բույսի հաստենացման մոմային շերջանում: Բույսերի հաստենացման մոմային շրջանը սերմի հավաքման ամենալավ ժամկետն է հանդիսանում:

4. Պետք է հիշել, որ ոչ մի դեպքում չի կարելի հավաքել չհասած սերմը, որովհետև միևնույն է, այդպիսի սերմը չի ծլի, կամ ծլունակութունը կլինի ջնշին:

Առանձին տեսակի խոտաբույսերի սերմահավաքը անհրաժեշտ է կատարել հետևյալ ժամկետներում՝

1. Երեֆնուկները հարկավոր է հավաքել, երբ ծաղկափնջերի (խնձորիկների) 75% -ը կգորշանան, իսկ սերմերը կաղնդանան և ձեռք կբերեն մանիշակագույն կամ դեղին գույն: Տրորելիս՝ ձեռքում կմնա մի քանի հատ պինդ սերմ:

2. Առվույտները հավաքում են, երբ բոլոր ունդերի 75—80%-ը վզորշանան, սերմը եղունգով չի կտրվում և դեղին գույն է ձեռք բերում:

3. Սիզախոտը (տիմոֆեեկան) պատրաստ է լինում սերմահավաքման ժամանակ, երբ 90%- ծաղկափթութունների սերմերը կաղնդանան, գորշ կամ բաց մոխրագույն կդառնան: Այդ ժամանակ ծաղկափթութունների 50—60%-ի գաղաթները կարժես կտրված լինեն, իսկ 3—5%-ինը՝ սերմը վերելից թափվում է և հասկի տուսնյքը բացվում:

4. Սանրանման չայիրը (ժիտնյալը) պատրաստ է, երբ բույսը ստանում է ծղոտի գույն և մի քիչ կանաչին է առելիս: Այդ շրջանը համապատասխանում է բույսի կաթնատու շրջանի վերջին և մոմայինի սկզբին:

5. Շյուղախոտի սերմահավաքը կաղմակերպվում է մոմային հաստենացման շրջանում, առավոտյան ժամերին, այլապես սերմը

հավաքման ժամանակ խիստ թափվում է: Շյուղախոտը հարկավոր է հավաքել, երբ այն պոկիկույ ձևերում մնում է մի քանի հատ սերմ:

6. Անփխտ ցորենովի սերմը պետք է հավաքել մոմաշին հասունացման շրջանում: Այդ ժամանակ ցողունները կիսով մուգ դույն են ստանում, իսկ հուրանը ընդունում է մահուշակի դույն:

7. Այծուկի (գալեգա) սերմը կարելի է հավաքել այն ժամանակ, երբ ունդերի 40—50% -ի փեղկերը մուգ-դարչնագույն կըզառնան, 30—35% -ը բաց-դարչնագույն, 15—30% -ը կանաչափուն-դարչնագույն:

8. Կոճղաձի սերմը հավաքում են, երբ ստորին և միջին ունդերի 50—75% -ը կգորշանան:

9. Գյուլուլի (վիկ) սերմը հավաքվում է, երբ նա կընդունի սև կամ դորշ գույն և սև գույն ունեցող սերմը կկազմի 65—70% -ը, դորշագույնը՝ 25%, կանաչ գույնովը՝ 5—10%:

10. Խառվույտի սերմը անհրաժեշտ է հավաքել, երբ ստորին ունդերը կգորշանան: Հարկավոր է հետևել, որպիսով բերքը չկորչի: Խառվույտի սերմը միանգամից է հասնում: Եթե չհետևենք՝ սերմը կթափվի:

7. ՍԵՐՄԻ ՀԱՎԱԲՈՒՄԸ

Սերմի հավաքման համար կոլխոզներում և սովխոզներում անհրաժեշտ է ստեղծել հատուկ բրիգադաներ կամ օգուկներ: Սերմի հավաքման տեխնիկան կապված է սերմի համար առանձնացված մարդագետներից, վերջինի ռեկեֆից ու բուսական կազմից և տնտեսական պայմաններից:

Սերմը կարելի է հավաքել մեքենաներով, գերանդիով, մանգաղով կամ ուղղակի ձեռքով: Պետք է հիշել, որ ոչ մի դեպքում չի կարելի հավաքել հիվանդություններով վարակված բույսերի սերմը: Սերմը պետք է հավաքել առողջ բույսերից:

Սերմի հավաքման համար անհրաժեշտ է օգտագործել տնտեսությունում գտնված բոլոր տեսակի հավաքիչ մեքենաները: Մեքենաներով սերմը հավաքում են այն դեպքում, երբ սերմը հավաքելու համար առանձնացված է մեծ տարածություն և սերմնադաշտի ռեկեֆը թույլ է տալիս մեքենա աշխատեցնել: Սերմի հավաք-

ման դործը կախված է նաև սերմնարանի խոտակաղմից, աշխինքն՝ էթն խոտակաղմը բաղկացած է մեկ տեսակ բույսից (շյուզախոտ, անքիստ ցորնուկ, սիզախոտ, սանրանման չալիք և այլն) կամ մի քանի խոտաբույսերի խառնուրդից, որոնց հասունացման ժամկետը խիստ տարբերվում է և դրանցից ցանկանում ենք հավաքել մեկի, սմենաարժեքավորի, սերմը:

Ասենահարմար մեքենաներից մեկն է լորոգրեյկան: Սերմը կարելի է հավաքել նաև հնձող-ինքնաթիռով (жатка самообсека) մեքենայով: Սիաջն պետք է անջատել թափող ապարատը, խորձկապիշներով (сноповязалка) և խոտահունձ մեքենաներով (сенокосилка) Գրանց վրա ամրացված պլատֆորմով: Այս վերջին երկու մեքենաներն էլ տալիս են սերմի բավականի մեծ կորուստ, որի պատճառով այդ մեքենաներով կարելի է օգտվել միայն բացառիկ դեպքում:

Լորոգրեյկայով և հնձող-ինքնաթիռով մեքենաներով հավաքելու ժամանակ, անհրաժեշտ է մեքենայի պլատֆորմի ետևի մասում ամրացնել հատիկաբռնիչ (зерноуловитель) — նեղ (12 սմ խորությամբ) արկղ, որը ծածկվում է ցանցավոր կափարիչով (сетчатая крышка): Հնձելու և խոտը պլատֆորմից դուրս գցելու ժամանակ թափվող սերմը ընկնում է արկղի մեջ: Այդ հատիկաբռնիչների նշանակությոնը շատ մեծ է, մասնավանդ, եթե սերմահավաքը կատարվում է երաշտ եղանակին, երբ շատ հեշտությամբ սերմը թափվում է: Հարկավոր է հետեւել արկղին, և լցվելուն պես դատարկել:

Մեքենաների բացակայության դեպքում պետք է գերանդիով կամ մանդաղով հավաքել սերմը, թեկուզ և մեծ տարածությունների վրա: Գերանդիով և մանդաղով սերմահավաքը կատարվում է այն դեպքում, երբ խոտաբույսերի մացառուտները (заросли) մանրածուկներով (20—50 քառ. մետրի չափ) տարածված են մեծ տարածությունների վրա:

Վերջապես, եթե խոտակաղմում խառնված վիճակում են զրտներվում միաժամանակ հասունացող խոտաբույսերը, սերմահավաքը կատարվում է ձեռքով:

Մեքենայով մեկ քանվորական օրում կարելի է հավաքել 5—5 հեկտար մաքուր սերմնարան, իսկ մանդաղով կամ ձեռքով, նույն ժամանակամիջոցում, կարելի է հավաքել 0,15—0,20 հեկտար:

Սերմի համար խոտաբույսերը պետք է հնձել ինչքան կարելի է շուտ, առաջնության ժամերին, որովհետև սերմը խոնավ վիճակում չի թափվում, սերմի կորուստը զգալի չափով պակասում է, երբ հունձը կտաքովում է շաղով:

Ձեռքով հավաքման ժամանակ, ընդհանրապես, սերմահավաքը անհրաժեշտ է կատարել օրվա կեսին, որովհետև առաջնության և երկրորդի շաղը դժվարացնում է բույսի սերմը ձեռքով քաշելը կամ ծաղկափնջերի պոկումը:

Խոնավ, անձրևային փոփոխական սերմահավաքը պետք է դադարեցնել, որովհետև անձրևի տակ ընկած սերմի համար հնձված խոտը շատ շուտ բորբոսանում է և փոսում:

Սերմի համար խոտաբույսերը անհրաժեշտ է հնձել ցածր՝ ելի բույսը ցածր հասակ ունի, իսկ ելի բույսի հասակը բարձր է, հնձում են բարձր, ինչքան կարելի է ծաղկափնջայուններին մոտ, որպեսզի տերևների և ցողունների ավելորդ մասսան չլվալարացնի խոտի սերմերի չորացումը: Բայց կարելի է հնձել և ցածր, ելի երկրորդ անգամ հնարավոր չի հնձել խոտի համար: Այդ դեպքում հարկավոր է մանրադնկրով խոտաբույսի ցողունները կտրել ծաղկափնջիկից:

Մեքենայով հնձելու ժամանակ, անհրաժեշտ է խոտը պլատֆորմից դուրս գցել, երբ կիսատակվի 8—10 խուրձ կապելու շափ: Դուրս գցվող խոտի տակ հարկավոր է փռել բրնձենոտ, որի վրա էլ պետք է կապել խուրձիկները:

Խուրձերը կապելու ժամանակ անհրաժեշտ է խոտը մի թեթև լիսի տակ, սերմի կորուստ չտալու համար, Խուրձ կապելը հեշտացնում է հետագա տեղափոխման, չորացման և կալսման դործը: Բայց խուրձ կապելն ամեն բույսի համար հնարավոր չէ, օրինակ այնպիսի ցածր հասակ ունեցող բույսը, ինչպիսիք է սսնրախման չափերը: Բարձր ցողունավոր բույսերը անհրաժեշտ է կապել խուրձերի մեջ: Եթե խոտակազմը խառն է և հնարավոր է անջատել բույսերը իրարից, անհրաժեշտ է այդ անել մինչև խուրձ կապելը:

Խուրձերը պետք է լինեն 15 սմ-ից ոչ հաստ, այլապես լավ չեն չորանա և կստացվի մեծ կորուստ: Մանր խուրձիկներն ավելի լավ են չորանում, չեն տաքանում և չեն բորբոսանում:

խորձերը 10—12 հատ կանգնեցվում են միասին բարդոցներով (ճածկ) կամ երկու շարքով, որպեսզի խոտը չորացվի տեղում և չհատունացած սերմերը հասնեն:

Խորձերը անձրևից պահպանելու համար բարդոցները (ճածկ) վերևից ծածկվում են խորձով, հուրանով՝ դեպի ներքև:

Սերմացուի խոտը լաստերում չորացնել չի կարելի, որովհետև չորանալուց հետո, խոտի հավաքման ժամանակ սերմի մեծ մասը կլիպվի:

Հնձած խոտը հարկավոր է շուտ հավաքել, որպեսզի սերմը չկախվի: Առավել ևս անխույզատրելի է հնձած խոտը շուտ եւ մուռ տալը: Լավ եղանակին խոտը բարդոցների (ճածկ) մեջ չորանում է 2—4 օրում: Չորացնելուց հետո, խորձերից զեղեր են դնում, իսկ ավելի լավ կլինի տեղափոխել ծածկի տակ: Տեղափոխման ժամանակ հարկավոր է ֆուրգոնի հատակին բրեզնտ փռել, որպեսզի խորձերից լիպված սերմը կարելի լինի հավաքել և կորուստ չունենալ:

8. ԻՆՉՊԵՍ ԿԱԼՍԵԼ, ՄԱՔՐԻԵԼ ԵՎ ՍԵՐՄԸ ՊԱՀԵԼ

Սերմի կալսումը պետք է սկսել խորձերը լրիվ չորացնելուց հետո, որովհետև եթե խոնավ վիճակում կալավեն, սերմի մեծ մասը կմնա խորձերի մեջ և կկորչի, իսկ լավ չորացրած խորձերը շուտ հեշտությունում են կալվում:

Կալսել հնարավոր է ամենահասարակից միջև ամենաբարդ կալսիչ մեքենաներով: Հացազգիները կարելի է կալսել բարդ կալսիչ մեքենայի վրա, որովհետև այդ դեպքում սերմը ստացվում է մաքուր և հեշտացնում է հետագա մաքրման գործը: Պրակտիկայում սերմը կալսելու համար գործ են ածում Լանցի № 2 կալսիչը, որն աշխատեսնում են ձիու ուժով կամ ուղղակի ձեռքով:

Սովորական կալսիչ մեքենաներով կալսելու դեպքում հարկավոր է խորձը բարաբանի մեջ մի քիչ ավելի պահել, քան այդ անում ենք հացահատիկի համար, իսկ դժվար կալսվող խոտաբույսերի սերմը անցկացնել երկու անգամ:

Ընդեղենների սերմերը արձակում են ունդերից դանադան կանտորուկից՝ կլեերատյորկաներով:

Թեթև կշիռ ունեցող խոռոչները (դարձան, տերե, ծաղկափրնջիկներ և այլն) հացազգիների սերմերից մաքրում են սովորա-

կան քամհար-տեսակավորող մեքենայով: Քամհարը անհրաժեշտ է տպահովել համապատասխան մաղերով: Մաքրելը կատարվում է օդի թուլ հոսանքով, որոշ դեպքերում հացազգիների սերմը մաքրում են մոլախոտերից «Տրիումֆ» տեսակավորիչով, իսկ ընդհանրերը՝ «Կոլտուտա» տեսակավորող մեքենայով: Փոքր քանակությամբ առվույտի սերմացուն կարելի է կալսել ձեռքով, կալսափայտով կամ քարի գլորակով: Կալսելուց հետո առվույտի ունդերը պարմանով անց են կացվում արուրող մեքենաների միջով:

Այծուկի (զալեզա) ունդերը կարելի է կալսել հացահատիկային կուլտուրաների համար պործածվող ձեռքի՝ ոչ շատ մեծ կալսիչով, իսկ եթե քանակապես քիչ է՝ ձեռքով:

Կալսելուց առաջ բոլոր թիթեռնածաղկավորներից պատկանող բույսերի սերմը անհրաժեշտ է լավ չորացնել: Սերմը հավաքելուց հետո պետք է օգտվել աշնան լավ եղանակներից և կալսել, չըթողնել ձմռանը կալսելու համար, որովհետև ունդերը նորից խոնավություն են ընդունում, կալսելը շատ դժվարանում է և առաջանում է սերմի մեծ կորուստ:

Կալսելուց և մաքրելուց հետո սերմը անհրաժեշտ է չորացնել և ապա լցնել պարկերի կամ տոպրակների մեջ և պահեստել: Տոպրակի մեջ պրվում է պիտակ (ЭТИКЕТКА), որի վրա գրվում է խոտի անունը, քաշը, որտեղ է հավաքվել (չրջան, կոխոզ և հողամաս), հավաքման ժամկետը, ով է հավաքել, հավաքողի ազգանունը:

Չորացրած սերմերը ձմռան ընթացքում կորցնում են ծլունակությունը: Ամենից լավն է արևի տակ չորացնելը: Չորացնելու ժամանակ սերմը հարկավոր է մի քանի անգամ խառնել:

Սերմի պահեստը պետք է լինի միանգամայն չոր և ունենա օդանցքներ, որպեսզի ժամանակ առ ժամանակ կատարվի օդափոխում:

Խոտաբույսերի սերմերը երկար պահել չի կարելի, որովհետև ամեն տարի իրենց ծլունակությունը 25%-ով կորցնում են:

Չանագան տեսակի սերմերը, երբ հավաքվում են ունդերով
 3ամ ողկույզներով, մաքրելուց հետո, ըստ մեր փորձերի, հետևյալ
 տվյալներն են տալիս.

Մարգագետնային

սիդախոտի 100 գրամից ստացվում է մաքուր սերմ 52 գր.
 Տափաստանա-

յին սիդախոտի 100 » » » » 50 գր.

Ողնախոտի (ձևո-
 քով սլակված) 100 » » » » 60 գր.

Եղջեբառվույտի 100 » » » » 50 գր.

Կարմիր երեք-
 նուկի 100 » » » » 24 գր.

Այծուկի (զալիզա) 100 » » » » 50 գր.

Քաղմամյա վի-
 կի 100 » » » » 30 գր.

Մատչիկի երեք-
 նուկի 100 » » » » 28 գր.

Զինի 100 » » » » 56 գր.

Սերմը հավաքելուն և մաքրելուն պես պետք է էտիկետկավոր-
 վի, այսինքն՝ պետք է պիտակի վրա գրվի սերմի անունը (հայե-
 քեն և ռուսերեն), որտեղ է հավաքվել սերմը, քաղը և հավաքողի
 ազգանունը և թիվը հետևյալ ձևով:

Մարգագետնային սիդախոտ. (ГМОФЕЕВКА ЛУГОВАЯ)

Բղովզալի լիռնաշղթայի հյուսիսային լանջերի

Կաթնաղբյուր գյուղից 3 կմ. դեպի հարավ-արևմուտք:

Հավաքող՝ Պետրոսյան Գևորգ

1949 թ. 23 օգոստոսի:

Քաղը Ե. ԿԿ:

Չ. ՎԱՅՐԻ ԽՈՏԱՐՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Վայրի խոտաբույսերի սերմը հավաքվում է նրա համար, որ
 նույն կամ մյուս տարի տնտեսություններում ցանվի և աչգպիսով
 հնարավոր լինի զարգացնել սերմաբուծությունն ու լուծել սերմի
 խնդիրը:

Որպես կանոն պետք է ընդունել հետևյալը. սերմը անհրաժեշտ է բաղմամբնել այն կալիստղում, որի շրջակայքում էլ հավաքվել է, որովհետև այդ շրջակայքի պայմաններին, առկա սերմնաբերուն հարմարվել է: Ի հարկե դա չի նշանակում որ մի շրջանում հավաքված սերմը չի կարելի ցանել մի այլ շրջանում: Կարելի է և ցանել համապատասխան այլ կլիմայական պայմաններ ունեցող շրջաններում:

Վայրի խոտաբույսերի շարքում կան այնպիսի բույսեր, որոնք բնության մեջ գտնվում են որպես պատրաստ սորոտեր: Դրանք կարելի է հավաքել և անմիջապես արտադրության մեջ արմատավորել: Այդպիսիք գլխավորապես հացադգինների ընտանիքին են պատկանում: Օրինակ, սիլվախոտը (տիմոֆեեկան), շուշախոտը, բարձր բազրասը, սանրահմանը և ուրիշները: Հացադգինների մեջ կան այնպիսիները, որոնք դանդաղ են ծլում և ոչ միանգամայն համատարած, որի պատճառով ցանքը ստացվում է հոտը: Սրանց թվում է, օրինակ, ողնախոտը: Ամենից վատ ծլունակություն ունեն թիֆեոնածաղիվորների ընտանիքին պատկանող բույսերը: Վերջինների մեջ կան մեծ քանակությամբ քարացած սերմեր, որի պատճառով աճեցումը համատարած չի լինում, ցանեցուց հետո դաշտում ծիւրը երևում են միայն հատուկներ: Հիշված սերմերի առանձնահատկությունները պահանջում են նաև հատուկ ագրոտեխնիկա: Օրինակ, հարկավոր է սերմը ցանելուց առաջ հատուկ մշակել և կիրառել այլ միջոցներ: Յանքսի ժամկետը մոտենալիս, անհրաժեշտ է պարզել աշնանից պահեստած սերմի որակը: Առաջին հերթին պետք է ցանքսից մեկ ամիս առաջ ստուգել սերմերի աղբյուրվածությունը: Եթե աղբյուրվածությունը մեծ է, անհրաժեշտ է սերմը նորից մաքրել: Սերմի մաքրությունը կարելի է հասցնել մինչև 98% -ի: Եթե 90—95% էլ հասնի կարելի է հաշվել, որ սերմի որակը լավն է: Սերմը մաքրելուց հետո որոշվում է նրա ծլունակությունը: Սերմը կարելի է ուղարկել ստուգման կայանը: Բացի ծլունակությունից անհրաժեշտ է իմանալ և ծլման էներգիան, որը ցույց կտա, թե արդյոք հնարավոր է միանգամից ստանալ համատարած ցանքս: Եթե այդ հնարավոր չէ, պետք է միջոցներ ձեռք առնել բարձրացնելու սերմի ծլունակությունն ու ծլելու էներգիան: Դրա համար կան հատուկ միջոցներ, այն է՝ սերմը մինչև ցանելը

Հնթարկել սկարիֆիկացիայի, այսինքն՝ սերմը ղմռնիտի (նաժ-դակ) կամ ջրի ավազում, կամ մանրացրած ապակիով $\frac{1}{2}$ ժամ տրո-րել: Պարկի մեջ լցվում է մանրացրած ապակին կամ ավա-զը և սերմը տրորվում: Այդ հղանակով հնարավոր է բարձրաց-նել սերմի ծլունակությունը: Օրինակ, շմշակված այծուկի (գալի-դայի) վայրի սերմի ծլունակությունը լինում է 8—35%, իսկ ավա-զով կամ ղմռնիտով մշակելուց հետո, ծլունակությունը բարձրանում հասնում է 80—98%-ի:

Պետք է ուշխատել, որպեսզի տնտեսությունում նախատեսնը-ված ցանքսի սերմի որակը և տվյալները ներքև բերված աղյուսա-կի թվերից ցածր չլինեն:

Մեծի տեսակը	Մաքու-ր-թյան % -ը	Մշակ-կության % -ը	Տնտես-կան պիտա-նությունը
Սիդախտ (Тимофеевка)	97	90	87
Շյուզախտ (овсяница)	93	80	76
Ուշնախտ (ежа)	77	83	63
Աղվեսաղի (лисохвост)	75	62	46
Բարձր բայդրաս (высокий райграс) .	70	80	56
Դաշապուկ (МЯТЛИКИ)	85	66	56
Ճորնուկ (костер)	75	60	45
Սանրանման շայիր (житняк)	85	50	42
Վիկ (вика)	95	85	80
Նրեբնուկ (клевер)	96	80	76
Նդջերառվուլտ (мядвенец)	94	75	70
Սողաջող շայիր (пырей)	90	60	54
Աղբիտուկ (полевица)	90	70	63
Առվույտ (люцерна)	90	60	54
Իշառվույտ (донник)	95	80	76
Կրեպան (эспарцет)	95	70	66

Տնտեսական պիտանիությունը որոշվում է այսպես. սերմի ծլունակության տոկոսը բազմապատկվում է աղբոսվածության տո-կոսի վրա և բաժանվում է 100-ի: Օրինակ, սիդախտի համար

$$\frac{97 \times 90}{100} = 87,3 \text{ տոկոս, որիմն ցանքսից } 15-20 \text{ օր}$$

ստաց կտրիսզր պետք է ձևերի տակ ունենա սերմի տնտեսական պիտանիությունը տվյալները և որա հետ միասին ցանքսի նորմաների տվյալները:

Ցանքսի նորմաների տվյալները միշտ բերվում են կշնկով: Խոտեսական պիտանիության 100 %-ից: Օրինակ, եթե ստում ենք սիզախոտը մեկ հեկտարի վրա պետք է ցանել 10 կգ (տես աղյուսակ № 2) դա նշանակում է, որ պետք է ցանել 10 կգ 100 % տնտեսական պիտանիություն ունեցող սերմ, իսկ եթե սիզախոտի տնտեսական պիտանիությունը կազմում է 90 %, ապա պետք է ցանել ոչ թե 10 կգ, այլ $\frac{10 \times 100}{90} = \frac{1000}{90} = 11,1$ կգ:

Դիտավոր բույսերի սերմի նորմաները բերում ենք հետևյալ աղյուսակում:

Խոտարույսերի 100 տնտեսական պիտանիությամբ ունեցող սերմի նորմաները

№/կ	Բույսի անունը	Նորման կգ-ներով		
		մաքուր սերմ	մաքուր սերմի 90 %	մաքուր սերմի 80 %
1	Սիզախոտ (timoфеезka луговая)	10	12	8
2	Շյուզախոտ (овсяница луговая)	16	18	12
3	Բարձր բայրաս (высокий райграс)	—	30	14
4	Անբիստ ցորենով (костер безостый)	24	30	18
5	Աղվեսաղի лисохвост луговой)	—	16	10
6	Ողնախոտ (ежа сборная)	18	24	14
7	Ագրիստով (полевица белая)	8	10	6
8	Դաշտադուկ (мятлик луговой)	13	16	8
9	Կարմիր շյուզախոտ (овсяница красная)	12	14	9
10	Նդշերառվույս (лядвенец рогатый)	12	15	8
11	Կարմիր երեքնուկ (клевер красный)	14	16	10
12	Վարդազուկ երեքնուկ (клевер розовый)	10	12	8
13	Սպիտակ երեքնուկ (клевер белый)	10	10	8
14	Սպիտակ իշառվույս (донник белый)	14	15	10
15	Արտաշին բայրաս (постбищный райграс)	14	18	12
16	Բազմաբայրաս » (многоукосный »)	35	40	24
17	Սերինոսահատ (канареечник)	14	18	8
18	Կորնգան (эспарцет)	100	120	60
19	Առվույս (люцерна)	14	16	10
20	Սողաղող չայի (пырей ползучий)	16	18	12
21	Սանրանման չայի (житняк гребенчатый)	13	16	10
22	Անատոլիական աշորա (рсжь анатолийская)	35	40	25

Աւրամացուի որակից և ցանկեւ քանակից բացի, անհրաժեշտ է լավ պատրաստել այն հողակտորները, որոնք հատկացվում են սերմի գաշտի համար:

Աւրամի համար անհրաժեշտ է հատկացնել մոլախոտերից ազատ ամենալավ բերրիություն ունեցող հողակտորները: Ամենից լավ կլինի սերմագաշտին հատկացնել արեւածաղիի, կարտոֆիլի կամ ալլ շարքահերկ կոլոտորայի աակից դուրս եկած գաշտը, բըը պետք է վարել աշնանից: Պետք է հիշել, որ լավ բերք ստանալու համար, կոլոտգի առաջին խնդիրը պետք է լինի մոլախոտերի գեմ սլայքարը:

Յրտահերկը կատարել գարնանը՝ շատ շուտ: Հենց որ հնարավոր լինի դաշտ դուրս գալ՝ անհրաժեշտ է փոցխել, որպէսզի հողից խոնավությունը չգոլորշիանա: Մի քանի օրից հետո, երբ մոլախոտերը կծլեն, գաշտն անհրաժեշտ է երեսվար անել (лущеное): Երեսվարը կարելի է կատարել և երկրորդ անգամ: Ամեն երեսվարից հետո, անհրաժեշտ է դաշտը փոցխել, որպէսզի խոնավությունը չգոլորշիանա: Վերջին երեսվարից հետո պետք է տալ պարարտանյութ—սուպերֆոսֆատ 3 ց. և կալիակաւն ալ 1,5 ց. մեկ հեկտարի վրա, և փոցխել, իսկ հետագա տարիները, ամեն գարնան, սոքակերֆոսֆատի և կալիակաւն ալի նույն քանակը և 3 ց. ամսնիում սուլֆատ:

Երեսվար արած հողը չի կարելի խոր կրկնավար անել, որովհետեւ մոլախոտերից մաքրված հողը կմնա տակը, իսկ մոլախոտերով վարակված ներքին շերտը հողի երեսը և ամբողջ երեսվարի արդյունքը կկորչի:

Բոլոր խոտաբույսերը կարելի է մշակել դաշտային այն ցանքաշրջանառություններում, որոնցում խոտաբույսերը օգտագործվում են 2—3 տարի: Ավելի լավ էլ լինի, եթե խոտաբույսերը տնդավորվեն հատուկ կերային և սերմարուծական ցանքաշրջանառություններում՝ 4—5 տարի օգտագործումով. այդպիսով խոտաբույսը մեկ անգամ կցանվի և 4—5 տարի սերմ կհավաքվի և սերմադաշտերի մշակման վրա թափած մեծ աշխատանքը կտա համապատասխան արդյունք:

Յանքսը կարելի է կատարել դարնանը, ամառը և աշնանը։ Ամենից լավ կլինի ցանքսը կատարել վերջին սառնամանիքներից հետո, երբ հեշտովյամբ կարելի է հողը աղատել մոլախոտերից։ Ամառը և աշնանը պետք է ցանել չոր շրջաններում, մաքուր ցիլի վրայով։

Յաճճսի եղանակները.— Սերմ ստանալու համար մարգա-տ-բոտային խոտաբույսերը կարելի է ցանել մի քանի եղանակով՝ շաղպան, համատարած շարքերով, լայն շարքերով, ծածկուցի տակ և առանց ծածկուցի։ Քանի դեռ սերմի կարիքը շատ մեծ է, մենք պետք է բնդունենք ցաճճսի լայնաշարք և առանց ծածկուցի եղա-նակը։ Հետագայում, երբ սերմի քանակը կավելանա, կարող ենք անցնել շարքային համատարած ցանքսերի։

Լայնաշարք ցանքսը տալիս է լավ արդյունք, բայց պահանջում է շատ ուշխառանք։ Կոլխովում անհրաժեշտ է խոտաբույսերի լայնաշարք ցանքսերի համար առանձնացնել հատուկ օղակներ կամ բրիգադաներ, և նրանց առաջ դնել առաջագրանք՝ ստանալ 1 հեկտարից շուրջախոտի սերմ 5 ց., սիլվախոտի սերմ՝ 4 ց., ուղ-նախոտի՝ 5 ց., ցորենովի՝ 2 ց., ալվիստով՝ 2 ց., բարձր բալդրա-սի՝ 4 ց., երեքնովի՝ 2 ց. և այլն։

Շուրջախոտի, սզնախոտի, ալվիստով, բարձր բալդրասի հա-մար պետք է միջշարքային տարածությունները վերցնել 50 սմ, եթե հեռաբալդրային տարածությունները պետք է մշակվեն ձիու ուժով։ Իսկ երբ միջշարքային տարածությունների մշակումը կատարվում է ձեռքի ուժով, ապա կարելի է վերցնել 25—30 սմ, այսինքն՝ ցա-նել մեկ ու մեք, անցքերը փակած շարքացանով։

Յանքսից առաջ և հետո անհրաժեշտ է կատարել հողի զրորա-նում՝ փայտե կամ քարե զլորակով կամ ջրով լցրած տակառներով։


Սերմի բարձր բերք ստանալու համար, բացի հողի ճիշտ պա-րարտացումից և ցանքսը ճիշտ ժամկետին կատարելուց, անհրա-ժեշտ է ամառվա ընթացքում շխոդնել որ սերմաղաշտում մոլախոտե-րը զարգանան։ Պետք է ցանքսի միջշարքային տարածությունները փխրեցնել, իսկ շարքի միջից մոլախոտերը ձեռքով հեռացնել։

Անհրաժեշտ է հիշել, որ մոլախոտերի դեմ պայքարելը ավելի հեշտ է կատարել դաշտում, քան թե տանը կայսելու ժամանակ։

Առաջին միջնաբային փխրեցումը կատարում են ձեռքի լոր-
խիով կամ ձեռքի «Պլանետ» № 17 կուլտիվատորով: Հետագա մշա-
կությունը պետք է անցկացնել ձիու ուժով՝ ձիու № 8 «Պլանետ»
կուլտիվատորով, կամ զսպանակավոր փոցիով: Նրկրորդ մշակու-
մից հետո հացազգիներին պետք է տալ ազոտային սնուցում:

Բերքատվության բարձրացման համար շատ լավ միջոցառում
է հանդիսանում միջնաբային տարածությունները 1—3 հա-
տույնում ունեցող տորֆի շերտով ծածկելը: Այս միջոցառումը հր-
կու անգամ բարձրացնում է սերմի բերքը:

Սերմի հասունացման ժամկետները, սերմահավաքի կազմա-
կերպումը, սերմահավաքը, սերմի կալսելը, մաքրելը և պահեստիլը
կատարվում է աֆնպես, ինչպես հիշված է գրքիս առաջին գլուխ-
ներում:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
Նրկու խոսք	3
1. Ինչու համար է կատարվում վայրի խոտաբույսերի սերմի հավաքումը	5
2. Վայրի խոտաբույսերի արժեքավոր տեսակները և նրանց տարածումը Հալաստանում	7
3. Վայրի խոտաբույսերի առանձնահատկությունները և նրանց հատկա- նիշները	10
4. Ինչպես առանձնացնել սերմնաբանները	37
5. Սերմնաբանների խնամքը	39
6. Սերմի հասունացման ժամկետի որոշումը	41
7. Սերմի հավաքումը	43
8. Ինչպես կաշնել, մաքրել և սերմը պահել	46
9. Վայրի խոտաբույսերի սերմի օգտագործումը	48

Առաջին միջնաբերդային փխրեցումը կատարում են ձեռքի թոր-
խիով կամ ձեռքի «Պլանետ» № 17 կուլտիվատորով: Հետագա մշա-
կությունը պետք է անցկացնել ձիու ուժով՝ ձիու № 8 «Պլանետ»
կուլտիվատորով, կամ զսպանակավոր փոցիով: Երկրորդ մշակու-
մից հետո հացազգիներին պետք է տալ ազոտային սնուցում:

Բերքատվության բարձրացման համար շատ լավ միջոցառում
է հանդիսանում միջնաբերդային տարածությունները 1—3 հաս-
տություն սնեցող տորթի շերտով ծածկելը: Այս միջոցառումը եր-
կու անգամ բարձրացնում է սերմի բերքը:

Սերմի հաստեղացման ժամկետները, սերմահավաքի կազմա-
կերպումը, սերմահավաքը, սերմի կալանելը, մաքրելը և պահեստիլը
կատարվում է աճիպես, ինչպես հիշված է դրրիս տառչին գլուխ-
ներում:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Երկու խոսք	3
1. Ինչու համար է կատարվում վայրի խոտաբույսերի սերմի հավաքումը .	5
2. Վայրի խոտաբույսերի արժեքավոր տեսակները և նրանց տարածումը Հայաստանում	7
3. Վայրի խոտաբույսերի առանձնահատկությունները և նրանց հատկա- նիշները	10
4. Ինչպես առանձնացնել սերմնարանները	37
5. Սերմնարանների խնամքը	39
6. Սերմի հասունացման ժամկետի որոշումը	41
7. Սերմի հավաքումը	43
8. Ինչպես կալսել, մաքրել և սերմը պահել	46
9. Վայրի խոտաբույսերի սերմի օգտագործումը	48

Պատ. խմբագիր՝ Ե. ՂԱԶԱՐՅԱՆ
ՏԵԼԵԳ. խմբագիր՝ Վ. ԳԱՎԹՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ՝ Հ. ՂԱԶԱՐՍՅԱՆ

ՎՖ 03249

Պատվեր № 494

Տիրաժ 4000

Հանձնված է արտագրության 11/VI 1949 թ.

Ստորագրված է տպագրության 9/VIII 1949 թ.

Տպագրական 3½ մամուլ

Հայպոլիգրաֆիկատի վարչության № 2 տպարան, Երևան Կոմունիստների փող. № 86,
1949 թ.

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Տող	Տարվա	Պետք է լինի
13 վ	100	100%
11 վ	Յրտահերկէ կատարել պարնանը՝ շատ շուտու շենց որ	Յրտահերկը գարնանը շատ շուտ, հենց որ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008893

ԳԻՆԸ 2 Ո, 10 Կ.

ЦЕНА

11
14933